

ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՅ ԻՐԱՔԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Կիրակի, 16 Յուլիս 2023-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ժողովրդային պալատէն ներս ընդունեց Իրաքի վարչապետ Մուհամետ Շալաա Սուտանին, որ Սուրիա ժամանեց պաշտօնական պատուիրակութեան ընկերակցութեամբ: Վարչապետին Նախագահ ալ-Ասատուիրակութեան մաս կը կազմէին Իրաքի փոխվարչապետ, արտաքին գործոց Նախարար դոկտ. Ֆուատ Յուսէյն, Իրաքի առեւտուրի Նախարար Ասիր Սալման եւ միացեալ զինուորական գործողութիւններու փոխդեկավար Բայս Ռիայմ:



Նախագահ Ասատ Իրաքի վարչապետին հետ խորհրդակցեցաւ երկու երկիրներուն յարաբերութեան եւ առեւտրական փոխանակումներու, փոխադրութեան եւ արդիւնաբերութեան ոլորտներու գործակցութեան զարգացման շուրջ:

Կողմերը խորհրդակցեցան նաեւ ահաբեկչութեան դէմ պայքարի միջոցներուն եւ քաղաքական կարեւոր հարցերու շուրջ:

Նախագահ Ասատ եւ Իրաքի վարչապետը շեշտեցին, որ Իրաքի Սուրիոյ նեցուկ կանգնիլը մարմնաւորեց երկու երկիրներուն միջեւ պատմական եւ եղբայրական սերտ յարաբերութիւնը: Անոնք շեշտեցին նաեւ այս յարաբերութեան զարգացման կարեւորութիւնը՝ ժողովրդական եւ պաշտօնական մակարդակներով:

Նախագահ Ասատ դիտել տուաւ, որ տոյն այցելութիւնը առիթ է շինիլ գործակցութիւն յառաջանելու Սուրիոյ եւ Իրաքի միջեւ:

Իր կարգին Իրաքի վարչապետը շեշտեց, որ Սուրիան յատուկ նշանակութիւն ունի Իրաքի ժողովուրդին համար եւ ան բարձր կը գնահատէ Սուրիոյ ժողովուրդին պայքարը ահաբեկչութեան դէմ:

ՔԱՐԵՆ ԵՓՓԷ ԱԶԳ. ՃԵՄԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԱՐՑ ՀՈՒՆՁԸ ԿՈՉՈՒԵՅԱԿ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԿԻ» ՍԵՐՈՒՆՎ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, կազմակերպութեամբ Ճեմարանի Տնօրէնութեան եւ Խնամակալութեան, Շաբաթ, 8 Յուլիս 2023-ին երեկոյեան ժամը 7:30-ին, Ազգ. Քարեն Եփփէ Ճեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ 2022-2023 ուսումնական տարեշրջանի երկրորդականի ամավերջի հանդէսը:

Հանդիսութեան ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխաններ, ՀՀ Հալէպի Հիւպատոսութեան խորհրդականն ու ՀՀ մարդասիրական առաքելութեան գնդապետը, Պատկան Մար-



միկի ներկայացուցիչը, Թեմի Ազգ. երեսփոխանական ժողովի եւ Ազգ. Վարչութեան, Ճեմարանի Խնամակալութեան եւ ազգային միութեանական մարմիններու ներկայացուցիչներ, Ճեմարանի տնօրէնութիւնն ու կրթական մշակներ, Շրջ. Միութեան վարչութեան ներկայացուցիչներ եւ ծնողներ:

Հանդէսը բաց յայտարարուեցաւ ու ներկաները մէկ վայրկեան յոտըն-

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԿ ՀԱՍՏՈՐՈՎՐԿՐԱՅԻՆ ՀԱԽԱՔ

14 Յուլիսին, Ստեփանակերտի մէջ տեղի ունեցաւ համաժողովրդական անժամկետ շարժման հանրահաւաք:

«Արմէնփրես»-ի թղթակիցին հաղորդումով՝ հանրահաւաքը սկսաւ հայրենիքի պաշտպանութեան համար հերոսաբար ինկածներու յիշատակը մէկ վայրկեան լռութեամբ յարգելով եւ Տէրունական աղօթքով:

Հանրահաւաքին մասնակցեցան նաեւ Արցախի Հանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութեան, պետական Նախարար Գուրգէն Ներսիսեան, Ազգային ժողովի Նախագահ Արթուր Թովմասեան, պաշտօնատար այլ անձեր եւ հազարաւոր արցախցիներ:



Մէկ օր առաջ Արցախի դիմագրուած օրհասական ներկայ վիճակին վերջ տալու համաժողովրդային խաղաղ շարժումի դիմելու կոչը ուղղած էր Արցախի Հանրապետութեան պետական Նախարար Գուրգէն Ներսիսեան:

Արցախի ժողովուրդը 15 Յուլիսէն, երբ Ատրապէյճան ամբողջութեամբ փակած է Լաչինի միջանցքը եւ զրկած արցախցիները սահմանափակ մարդասիրական մատակարարումներէն, կանգնած է ֆիզիքական իր գոյութեան սպառնացող վտանգի առջեւ: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրես»-ի թղթակիցը, Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին մէջ տեղի սկսած համաժողովրդական հանրահաւաքի ընթացքին այս մասին ըսաւ Արցախի Հանրապետութեան պետական Նախարար Գուրգէն Ներսիսեան:

«Այսօր արցախցիին ոտքի կանգնած է յայտարարելու, որ բաւ է. Ատրապէյճանն ու աշխարհը կ'ուզեն Արցախը դարձնել գոհաստեղան, որուն վրայ դրուած է մեր հայրենակիցներու, մեր երեխաներու կեանքը, եւ մենք աստիկա թողատրել չենք կրնար: Եթէ 12 Դեկտեմբեր 2022-ին արցախցիին ստիպուած էր թերի սնանիլ, եթէ առողջական հարցեր ունեցող մեր տարեցները, երեխաները, ծնողները հարկադրուած էին անցնելու ծանրագոյն կենսական խնդիրներու ընդմէջէն, 15 Յուլիս 2023-էն մեր ժողովուրդը կանգնեցուցած են ֆիզիքական գոյութեան սպառնացող վտանգի առջեւ: Գրեթէ մէկ ամիս է, որ Արցախը կ'ապրի ներքին պաշարներու հաշուոյն: Այդ ըն-

թացքին բոլորիս միատեղ ջանքերով փորձած ենք իրավիճակը պահել այնպէս, որպէսզի Արցախի շրջափակման այս ծանրագոյն հետեւանքները նուազագոյն ազդեցութիւնը ունենան արցախցիին վրայ՝ յոյս ունենալով,

որ ամենէն կարծ ժամկետին մէջ միջազգային հանրութիւնը, Ռուսիոյ Դաշնութիւնը, Հայաստանի Հանրապետութիւնը վճռական քայլերու կը ձեռնարկեն այս մահաբեր աղէտի ընթացքը կանգնեցնելու համար: Բայց պարզուեցաւ, որ բոլորը ընդամենը դիտորդի կարգավիճակով կը հետեւին այդ ամբողջին», Նշեց պետական Նախարարը՝ անցնելով, որ այսօր իրավիճակը արդէն օրհասական է, իսկ իւրաքանչիւր վաղուան օրը պիտի ըլլայ ալ անելի ծանր ու դժուար:

«Կրկին ձեր բոլորին անուսով կ'ուզեմ գոռալ՝ մենք արդէն հասած ենք համբերութեան եզրագիծին եւ այլեւս զրկանքներու հաշուոյն ի վիճակի չենք ձեզ ընծեռել քաղաքական խուսանաւումներ կատարելու կարելիութիւններ: Մենք այլեւս ի վիճակի չենք ինքնամոռաց տանջուիլ: Ի վիճակի չենք, որովհետեւ այլեւս հիւժուելու տեղ չունինք: Որովհետեւ որեւէ զիջում այլեւս մեր երեխաներու կեանքի գնով է՝ Արցախի 30 հազար երեխաներու կեանքի գնով: Մենք մեր երեխաներուն կեանքը երբեք սակարկութեան առարկայ պիտի չդարձնենք», շեշտեց պետական Նախարար Գուրգէն Ներսիսեան:

Այնուհետեւ հանրահաւաքին մասնակիցները երթով շարժեցան դէպի Ռուսիոյ Դաշնութեան խաղաղապահ զօրախումբի հրամանատարութեան կեդրոնը, որ կը գտնուի Արցախի Իւանեան համայնքին մէջ: Հանդիպում ունենալէ ետք հրամանատարութեան հետ, Արցախի Հանրապետութեան պետական Նախարար Գուրգէն Ներսիսեան մակրամասնութիւններ ներկայացուց այդ հանդիպումէն:

Պետական Նախարարին համաձայն, խաղաղապահ առաքելութեան հրամանատարութիւնը կ'ընդունի, որ խախտուած են 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեան դրոյթները: «Պարտաւորուած եւ ընդունած են, որ իրենք աշխատանք ունին կատարելիք՝ մարդասիրական ճգնաժամը վերացնելու համար», անցնուց Գուրգէն Ներսիսեան:

Տեղական Լրագրող

Խմբագրական

ԱՐՅԱՆ ԿՐ ԶԱՆԱՅ ԾԻՇԴ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ ՊԱՅԵԼ ԻՐ ՆՇԱԶՈՂԸ

Արդեն յստակ է, որ Ատրպեյճան Արցախի ժողովուրդին պայքարը իմաստագրելու համար ամեն ջանք ի գործ կը դնե: Ան թե՛ Արցախի ժողովուրդը Ատրպեյճանի մէջ համարկելու, թե՛ Արցախ-Հայաստան ուղղակի կապը խզելու եւ թե՛ Չանգեզուրի միջանցքին ուղղութեամբ իր հեռանկարները իրականացնելու փուլային աշխատանք կ'իրականացնէ:

Ատրպեյճան Բերձորի միջանցքի փակումով կը միտեր արցախցիներուն պայքարի նշանոցը իջեցնել ու միջազգային հարթակներու վրայ Արցախի ինքնորոշման իրաւունքի կամ Արցախի անկախութեան հարցի արծարծումը անուղղակիօրէն փոխարինել Արցախ մարդասիրական օժանդակութիւններ հասցնելու հարցով: Այսպիսով ան արցախեան հարցը այնքան նեղ օղակի մէջ պիտի յաջողէր տեղադրել, որ Նոյնիսկ Հայաստանի իշխանութիւններուն կրկնած Արցախի ժողովուրդին այսպէս կոչուած «իրաւունքներու պահպանման հարցը» պիտի սահմանափակէր մարդասիրական օժանդակութիւններու իրաւունքի նեղ շրջագիծին մէջ: Դեռեւաբար ալ միջազգային բեմերէն պիտի հնչէին միայն Բերձորի միջանցքը բանալու եւ Արցախին մարդասիրական օժանդակութիւններ հասցնելու կոչերը եւ լուսանցքի տակ պիտի մնային Արցախի ինքնորոշման իրաւունքի եւ անկախութեան բուն խնդիրները:

Այդպէս ալ կը նկատենք վերջին շրջանին միջազգային կողմերէ հընչող կոչերուն մէջ:

Արցախի ժողովուրդը եւ «Հայաքուն» ստորագրահաւաքի ծրագիրը, սակայն, ճիշդ այս նշանոցն է որ պահել կը ջանան: Արցախի հարցը չսահմանափակելու մարդասիրական միջանցք բանալու շրջագիծին մէջ եւ Բերձորի միջանցքին փակումը Ատրպեյճանի ցեղասպանական քաղաքականութեան ցուցանիշը համարելով աւելի շեշտակիօրէն արծարծելու Արցախի ինքնորոշման իրաւունքի հարցը:

Այստեղ տեղին է լուսարձակի տակ բերել Պրիւքսէլեան եռակողմ հանդիպումէն բխած Շարլ Միշելի կատարած յայտարարութիւններուն «Մարդասիրական հարցեր» խորագիրով 4-րդ կետը, ուր Միշել կը յայտնէ հետեւեալը. «Ես ընդձեռն եմ Լաչինի ճամբու բացման անհրաժեշտութիւնը: Ես նաեւ նշած եմ Ադտամի միջոցով մարդասիրական մատակարարումներ կատարելու Ատրպեյճանի պատրաստակամութիւնը: Ես երկու տարբերակներն ալ կարելոր կը նկատեմ եւ կը խորհուսեմ մարդասիրական առաքումներ կատարել երկու կողմերէն՝ բնակչութեան կարիքները ապահովելու համար: Ես ողջունած եմ նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտէին կողմէ բժշկական տարահանումներու վերսկսումը»:

Ինչո՞ւ Ատրպեյճան Բերձորի միջանցքը կ'առաջարկէ փոխարինել Ադտամ-Պարտա անցքով:

Վերոյիշում մը կատարելու համար մէքերենք 2021-ին 168.am-ի մէջ իրատարակուած հետեւեալ տեղեկութիւնը.

«Ընկերային ցանցերու եւ լրատուական հարթակներու վրայ շրջանառութեան մէջ դրուեցաւ տեղեկութիւն մը, ըստ որուն Ատրպեյճանցիները Թարթառ գետի հունը կը նախատեսեն փոխել, եւ այդ նպատակով այս օրերուն շինարարական մեծաքանակ սարքեր կը տեղափոխեն համապատասխան վայր, որուն հետեւանքով Սարսանգի ջրամբարը կը ցամքի... Որպէս յաւելում, մասնաւորապէս, նշենք, որ Պարտան՝ Պարտաւը, կը գտնուի դաշտային Արցախի՝ Թարթառ գետի ափին»:

«168.am-ին հասած տեղեկութիւններով, իրականութեան մէջ Ատրպեյճանական կողմը Գոշասարէն ճանապարհ կը բանայ Զարվաճառի տաք ջուրերով դէպի Զաշաթաղի շրջանի Շալուա-Հիմնաշէն-Շրուական-Սպիտակաջուր-Մոշաթաղ հատուածը, որ պիտի միանայ Ադաւնոյին»:

Աղբիւրը կը յայտնէր նաեւ. «Աւելին. Մարտ ամսուն Ատրպեյճանցի քաղաքագետ Իլկար Վելիգատէն հարցազրոյցներէն մէկուն մէջ խօսելով մայրուղիներու մասին՝ կարելոր համարած էր ինքնաշարժներու հաղորդակցութեան վերականգնումը Չանգեզուրի միջանցքին միջոցով, ինչպէս նաեւ՝ Նախիջեան-Շախպուզ-Գորիս-Լաչին-Ստեփանակերտ-Ադտամ-Պարտա-Եւլախ մայրուղիները կամ ինքնաշարժներու ուղիները: Վելիգատէն շեշտած էր, որ ափսոսանքով կ'անցնի Չանգեզուրի հիւսիսային մասով եւ իրարու կը կապէ աշխարհագրական տարբեր շրջաններ»:

Այս տեղեկութիւնը կը հաստատէ, որ Ատրպեյճան կը ջանայ բոլորովին չեղեալ համարել Բերձորէն դէպի Հայաստան անցքը եւ գայն փոխարինել Ադտամ-Պարտա անցքով, որպէսզի դէպի Չանգեզուր իր նախատեսումները իրականանալի դառնան աստիճանաբար եւ Արցախ - Հայաստան մասամբ ազատ կապը վերջնականապէս խզուի:

Ինչպէս Արցախի ժողովուրդը, այնպէս ալ համայն հայութիւնը Արցախի ինքնորոշման իրաւունքի օրակարգը պետք չէ լուսարձակներէ հեռու պահել նախապատուութիւնը տալով մարդասիրական օրակարգին, ընդհակառակը՝ հարկ է գանոնք շողկապել, պարզելով որ Ատրպեյճանի Արցախեան տարածքներ բռնագրաւելու եւ Արցախի ժողովուրդին տարրական իրաւունքները խլելու արդիւնք ու փաստ է նաեւ մարդասիրական ներկայ տագնապը, իսկ Արցախի ժողովուրդը նման վտանգներէ ու ցեղասպանական արարքներէ փրկելու միակ միջոցը անոր ինքնորոշման իրաւունքի ճանաչումն է:

«Գ.»

-Չորեքշաբթի, 19 Յուլիս 2023-ի կես գիշերուան ժամը 00:25-ին, Իսրայէլ իրթիւններ արձակեց սուրիական գրաւուած Կուլանի հիւսիսային բաժինէն Դամասկոսի ուղղութեամբ:



Սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին իրթիւններուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը:

Յարձակումին հետեւանքով 2 զինուոր վիրաւորուեցաւ եւ սիրիական վնասներ արձանագրուեցան:

-Իրաքեան կառավարութեան բանբեր Պասեմ Աուատի յայտնեց, որ Սուրիոյ խաղաղութիւնը անբաժանելի մասնիկն է Իրաքի եւ ամբողջ տարածաշրջանի խաղաղութեան, շեշտելով, որ Իրաք Սուրիոյ դեմ սահմանուած տնտեսական պատժամիջոցները չեղեալ համարելու բոլոր միջոցներուն իր աջակցութիւնը կը յայտնէ:



Սուտանիի Սուրիա այցիլն ընթացքին քննարկուած կարելորագոյն սիրիներուն անդրադառնալով Աուատի ըսաւ. «Ընկարկուած կարելորագոյն օրակարգերէն էին՝ սահմաններու ապահովութիւնը, ահաբեկիչներու ներթափանցման կանխումը, ահաբեկչական սպառնալիքներուն ոչնչացումը, Պանիասի գիծի վերանորոգումը՝ իրաքեան քարիւղը Սուրիա արտածելու միջոցներու որոնումը եւ այլն»:

-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտարարեց, որ Սուրիա խստիւ կը դատապարտէ ֆրանսական արտաքին գործոց նախարարութեան պատուիրակութեան Սուրիա ապօրինի մուտքը: Նախարարութիւնը աւելցուց, որ սոյն արարքը խախտում կը համարուի միջազգային ամենատարրական օրէնքներուն եւ կանոններուն:



ՅԱՒԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ՝ ՈՒՂՂՈՒԹ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԶՐԱԶ ԲԵՇԻՇԵԱՆԻ ՄԱՅՐՈՒՆ ՏԵՍՈՒՐ ԱՌԻԹՈՎ

Վեհափառ Տէր, Սրտի խոր կսկիծով իմացանք գոյժը Ձերոյ Սրբութեան եղբոր՝ Զրաչ Բեշիշեանի մահուան, որ պատահեցաւ Շաբաթ, 15 Յուլիս 2023-ին, ԱՄՆ:

Այս տխուր առիթով Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, թեմի Ազգ. Իշխանութեան, Կրօնական ժողովին, կրթական հաստատութիւններուն, միութիւններուն եւ բարեպաշտ ժողովուրդին անունով մեր խորագագաց ցաւակցութիւնը կը յայտնենք Ձերոյ Սրբութեան:

Կ'աղօթենք Ամենակալին, որ Ձեր հանգուցեալ եղբոր հոգին երկնային Արքայութեան մէջ հանգչեցնէ եւ Ս. Հոգւոյն մխիթարութիւնը պարգեւէ Ձեզի եւ ձեր հարազատներուն:



Առաջնորդութիւն Բերիոյ Հայոց Թեմին
Հալեպ, 18 Յուլիս 2023

Լուրեր Հայաշխարհին

ԱՐՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՋ ՆԱՏԱՆՈՅՑԻ ՍԿՍԱԲ

Արցախի նախագահ Արայիկ Յարությանի Ստեփանակերտի մեջ նըստացոյցի սկսաւ:

Ան նախքան նստացոյցը հանդես եկաւ ուղերձով մը, գոր կը ներկայացնէր ստորեւ.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

«Արդէն եօթ ամսից աւելի է, ինչ Արցախի ժողովուրդը մաքառում է մարդկութեան դէմ ատրայեյճանական նոր յանցագործութեան՝ շրջափակման դէմ: Արցախի քաղաքացիների, մեքենաների ու բեռների տեղաշարժի խոչընդոտները, վերջին մէկ ամսում նոյնիսկ հումանիտար (մարդասիրական) բեռների մատակարարման ամբողջական արգելքը, կազմատակարարման ու էլեկտրամատակարարման շարունակական խափանումը, պարբերական ռազմական ագրեսիաներն (յարձակումները) ու սադրանքները, հոգեբանական ահաբեկչութիւնը նպատակ ունեն ճնշելու եւ կոտորելու Արցախի ժողովրդի ազատ կամքն ու ինքնորոշման իրաւունքը, բռնի կերպով հպատակեցնելու նրան եւ, վերջի վերջոյ, յանգեցնելու էթնիկ (ցեղային) գըտման:

«Արցախի Զանրապետութեան ժողովուրդն ու իշխանութիւնները բազմիցս արտայայտել են իրենց դիրքորոշումները, որոնցից կ'ուզէի առանձնացնել հետեւեալները՝

«Մենք պայքարում ենք մեր սեփական հայրենիքում մեր արժանապատիւ կեանքի եւ ինքնորոշման անօտարելի իրաւունքի իրացման, ճանաչման ու պաշտպանութեան համար, իսկ այդ իրաւունքը բնական է եւ ենթակայ չէ սակարկման ու զիջման:

«Ատրայեյճանում տիրող՝ հայ ժողովրդի դէմ էթնիկատեղութեան ու խտրականութեան համակարգային քաղաքականութեան պայմաններում յատկապէս Արցախի հայերը կանգնած են ֆիզիքական ոչնչացման իրական սպառնալիքի առջեւ, որի յստակ ապացոյցներից են 2020թ. պատերազմով եւ ընթացիկ շրջափակմամբ դրսեւորուած մարդկութեան դէմ յանցագործութիւնները: Այդպիսի պայմաններում մեր արտաքին ինքնորոշման իրաւունքի ճանաչումն ու պաշտպանութիւնը անփոխարինելի միջոց է ոչ միայն սեփական ճակատագիրը տնօրինելու, այլեւ՝ մի ողջ բնիկ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը երաշխաւորելու համար:

«Անընդունելի համարելով 2020թ. պատերազմը, դրա վարման յանցաւոր մեքողները եւ հետեւանքները՝ միեւնոյն ժամանակ մենք ստիպուած հաշուի ենք նստել 2020թ. Նոյեմբերի 9ի եռակողմ յայտարարութեան ձեւաւորած նոր իրողութեան հետ՝ յոյս ունենալով, որ գոնէ դա տեւական ժամանակ կ'ապահովի որոշակի կայուն միջավայր մեր ժողովրդի՝ սեփական հայրենիքում անվտանգ ու արժանապատիւ գոյութեան համար: Այնուամենայնիւ, մենք այս ընթացքում ունեցանք մի շարք ռազմական ագրեսիաներ Ատրայեյճանի կողմից, իսկ պատերազմի ավարտից երկու տարի անց՝ արդէն շրջափակում, այնուհետեւ՝ լրիւ պաշարում՝ ոտնահարելով ոչ միայն միջազգային իրաւունքի հանրայայտ նորմերը, այլեւ՝ եռակողմ յայտարարութեան բազմաթիւ դրոյթներ՝ Զաշաթաղի (Լաչինի) միջանցքի, ՌԴ խաղաղապահ զօրակազմի երաշխիքների եւ այլ առումներով:

«Մենք միաժամանակ միշտ բաց ենք եղել ատրայեյճանական կողմի հետ ընկալելու ատրայեյճանա-Ղարաբաղեան հակամարտութեան բոլոր բաղադրիչները եւ կողմերի մտաւորութիւնները, մշտապէս դրսեւորել ենք մեզ որպէս կառուցողական կողմ՝ գիտակցելով մեր խոցելի վիճակը, բայց եւ ձգտելով պահպանել մեր կենսական իրաւունքներն ու շահերը: Սակայն Ատրայեյճանը երբեք չի ցանկացել իրական երկխօսութիւն ունենալ մեզ հետ՝ միջազգային անպատժելիութիւնից խրախուսուած ընտրելով ահազանգոյ բռնաճնշումների ու հպատակեցման ճանապարհը:

«Շրջափակման ողջ ընթացքում մենք յոյս ենք ունեցել, որ միջազգային հանրութեան տարբեր դերակատարներ կը վերացնեն շրջափակումը, կը կանխեն դրա հետագայ խորացումը: Սակայն մենք լսել ենք միայն բարի խօսքեր, բայց ո՛չ եռակողմ յայտարարութեան, ո՛չ ՄԱԿի Արդարադատութեան միջազգային դատարանի հրամանների, ո՛չ Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի որոշումների, ո՛չ էլ միջազգային կազմակերպութիւնների, առանձին պետութիւնների եւ այլ դերակատարների կոչերի գործնական կատարում այդպէս էլ չտեսանք: Որոշումից որոշում, կոչից կոչ Արցախի ժողովրդի վիճակը գնալով բարդացել է, իսկ Ատրայեյճանը դարձել է աւելի ու աւելի սանձարձակ, ինչը նշանաւորում է միջազգային իրաւակարգի հոգեվարքը:

«Դեկտեմբերից Յունիս տեւած հիւժող շրջափակումից եւ վերջին մէկ ամսուայ լրիւ պաշարումից յետոյ այժմ Արցախում ունենք սննդի, վառե-

լիքի, դեղորայքի, հիգիենայի (մաքրութեան) եւ այլ առաջին անհրաժեշտութեան պարագաների մեծ սղութիւն, գիւղատնտեսական աշխատանքների գրեթէ ամբողջութեամբ կասեցում, հանրային տրանսպորտի գործունեութեան ծաւալների խստիւ կրճատում, ջրի ու կապի ենթակառուցուածքների շարունակական խափանումներ, հիւանդանոցների, հացի արտադրամասերի ու այլ կենսական օբյեկտների (ապրանքներու) աշխատանքի խափանումներ՝ էլեկտրամատակարարման այլընտրանքային լուծումների բացակայութեան պատճառով, երեխաների, յղիների ու այլ խոցելի խմբերի թերսնուցում, հարիւրաւոր բաժանուած ընտանիքներ եւ այլն, եւ այլն: Մի քանի օրուայ մէջ այս վիճակը շատ աւելի սուր է դառնալու՝ իր բոլոր անդառնալի հետեւանքներով հանդերձ:

«Այս ողջ ընթացքում Արցախի Զանրապետութեան իշխանութիւնների կողմից բազմաթիւ միջոցներ են ձեռնարկուել թէ՛ միջազգային հարթակներում եւ թէ՛ տեղում՝ ապահովելու համար պատշաճ դիմադրութիւն աստըրպեյճանական ոտնձգութիւններին: Դրանց հիմնական մասը տեսանելի չէ՝ հաշուի առնելով տարբեր զգայուն հանգամանքներ, եւ նաեւ այդ քանքերի շնորհիւ ենք կարողացել այսքան ժամանակ դիմակայել շրջափակման ծանր մարտահրաւերներին:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

«Յաշուի առնելով առկայ ծանրագոյն իրավիճակն ու վերահաս հումանիտար ու անվտանգային աղետը՝ ես որոշել եմ դիմել ծայրայեղ միջոցի, այն է՝ հենց այս պահից Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում միանալ բազմաթիւ քաղաքացիների կողմից մեկնարկած նստացոյցին: Սա լրացուցիչ ճիգ ու ահագանգ է միջազգային գործնական ուշադրութիւն գրաւելու, յոր-

դորելու միջազգային հանրութեանը կատարել իր ստանձնած պարտաւորութիւնները, մղելու հայ ժողովրդին եւ մեր բոլոր բարեկամներին ակտիւ ու անյապաղ գործողութիւնների:

«Այս նստացոյցով մենք ակնկալում ենք, որ Յայաստանը, Ռուսաստանը, ԱՄՆ, Ֆրանսիան, Եւրամիութիւնը, ՄԱԿի Անվտանգութեան խորհուրդն ու այլ լիազօր մարմիններ, ինչպէս նաեւ բոլոր մնացած առնչուող դերակատարները գերծ կը մասն առաջին հերթին Ատրայեյճանի հետագայ ագրեսիւ ու յանցաւոր գործողութիւնները խրախուսելուց ու անտեսելուց, իսկ այնուհետեւ՝ կը կատարեն իրենց պարտաւորութիւնները եռակողմ յայտարարութեան, ՄԱԿի Արդարադատութեան միջազգային դատարանի հրամանների եւ միջազգային այլ ակտերի ու պայմանաւորութիւնների պատշաճ կատարման ուղղութեամբ:

«Իսկ ահա Մայր Զայրենիքում ու Սփիւռքում բնակուող հայ ժողովրդի բոլոր հատուածներից ակնկալում ու խնդրում ենք, որ բոլոր հնարաւոր գործողութիւնների դիմեն որոշում կայացնողների ուշադրութիւնը հրաւիրելու եւ Արցախին աջակցող գործնական քայլեր կատարելու ուղղութեամբ: Այդ համատեքստում ողջունելի է վերջին օրերին մեկնարկած համաժողովրդական շարժումը, այն բոլոր արցախցիների սրտերից ու հոգիներից բխած շարժում է, որի պատշաճ շարունակութեանն ու զարգացմանն ենք սպասում ողջ հայ ժողովրդի շրջանում: Վստահ եմ, որ տարբեր երկրներում նըստացոյցների եւ բողոքի ու իրազեկման այլ զանգուածային արշաւների միջոցով հնարաւոր է շօշափելի արդիւնք ապահովել այս պայքարում: Միջազգային հանրութիւնը պէտք է զգայ հայ ժողովրդի վճռական կամքն ու աստարումն Արցախին, քանի որ Արցախի հայկական ու արժանապատիւ ապագայի բանալին հենց հայ ժողովրդի ձեռքերում է:


«Մեկնարկած նստացոյցին միանալն իմ սահմանադրական, քաղաքացիական ու ազգային պարտաւորութիւնների կատարմանն ուղղուած ծայրայեղ քայլ է, այս իրավիճակում ես աւելի արդիւնաւետ այլ տարբերակ չեմ գտել: Այն որեւէ կերպ էականօրէն չի ազդելու պետական կառավարման համակարգի գործունեութեան վրայ, եւ բոլոր մարմիններն ու պաշտօնեաները շարունակելու են իմ գլխաւորութեամբ կատարել իրենց ծառայողական պարտականութիւնները:

«Այս օրերի ընթացքում ես հնարաւորութիւն կ'ունենամ Վերածննդի հրապարակում շփուել համաժողովրդական շարժման, հասարակութեան եւ քաղաքական համակարգի բոլոր հիմնական դերակատարների ու խմբերի հետ, միասին քննարկել մեր անելիքները եւ միասին էլ համապատասխան որոշումներ կայացնել եւ իրականացնել դրանք: Եթէ մէկ շաբաթուայ ընթացքում միջազգային միջամտութեամբ Արցախի ժողովրդի վիճակը չվերադառնայ քիչ թէ շատ կայուն ու բնականոն հուն, ապա դրանից յետոյ մենք դիմելու ենք աւելի կոշտ գործողութիւնների եւ Արցախում, ե՛ւ դրանից դուրս:

«Աստուած պահապան Արցախին եւ ուժ ու կորով մեր ժողովրդին»:



ՆԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ Է - Գ. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԷՋ ՄԻԱՅՈՒՄ



Ս. Մահերեւեան

Անձի Փոխան Իմաստուններու Կազմի Ծուրջ

Հայրենիքին ու ազգին փրկութեան միտող ամբողջական եւ ընդգրկուն ծրագրի մը մասին խօսելէ առաջ, պահ մը կանգ առնենք իրողութեան մը վրայ, որ արգելակ մըն է (ոչ միակ արգելակը) նման ծրագրի մը բիրտ-ղացման ճամբուն վրայ:

Հայաստանի մէջ (եւ ո՛չ միայն Հայաստանի, այլ նաեւ՝ Սփիւռքի), կայ ինքզինք պարտադրող անաւորութիւն մը, որ յարատեւօրէն գլուխ կը բարձրացնէ, երբ ձախիլի իշխանաւորները փոխարինելու ճիգերը որոշ հասունացում կ'ապրին: Մարդիկ կը սիրեն հարց տալ, թէ ո՞ր ԱՆՅԱԶՍԸ պիտի ըլլայ նոր առաջնորդը, որո՞ւ շուրջ պէտք է համախմբուի բոլորը: Եւ ամէն անգամ որ որոշ անհատի մը անունը քիչ թէ շատ ակներեւ կը դառնայ, մասնաւորաբար իշխանաւորներու եւ անոնց թմբակահարներու քարոզչական մեքենաները ու (սմանապէս հինէն եկող) որոշ մտածելակերպ մը այդ անհատը կը դարձնեն քննադատութեան թիրախ, անոր կը փակցուին «հիներէն է», «անցեալին փորձուած է եւ բոլորը բաւարարող արդիւնքի չէ հասած» եւ այլ պիտակներ: Եթէ նման վերաբերմունք արձանագրուէր քաղաքական օրէն բնական պայմաններ ապրող երկրի մը մէջ, տեղ մը հասկնալի պիտի ըլլար, սակայն երբ նոյն «տրամաբանութիւնը» ինքզինք կը պարտադրէ կորուստ-կորուստ գացող մեր հայրենիքին մէջ...



«Մարգարէին պատմութեանը» ժառանգելու հարցին շուրջ վեճը պէտք է վերջ գտնէ: Հայաստան հինգ տարիէ ի վեր, բայց մանաւանդ 44-օրեայ պատերազմէն առջին, գրեթէ բոլոր ոլորտներուն մէջ ապրած է այնպիսի՝ մաշուներ, որոնք եթէ հետեւանք են ՄԵԿ ԱՆՅԱԶՍԻ ԿԱՄԱԶԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ (անցեալն այլ անպարտ չէ), անդին, բոլորին խոստովակիլ կու տան, թէ այսօր չկայ անհատ մը, առանձնակի կուսակցութիւն մը, քաղաքական խըմբաւորում մը, որ կարողութիւնը ունի միայնակօրէն իր ուսերուն վերցնելու փրկութեան ու վերականգնումի գործը: Եւ Դաշնակցութիւնը միակը չէ, որ կրկին ու կրկին կը բարձրաձայնէ այս պահանջը: Այս ուղղամիտ մտածողութիւնը կ'ընդգրկէ նաեւ ամբողջ Սփիւռքը: Յիշենք, որ այլ երկիրներ ալ երբեմն մատնուած են ճգնաժամային անդուհոսներու, որոնք հարկադրած են ըստ կարելոյն միացնել բոլոր ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՆԵՐՈՒՆ ԺՆՏՈՒՄՈՒՆԵՐՈՒՆ:

Բերենք ո՛չ սովորական օրինակ մը (սովորական է օրինակ վերցնել ֆութպոլի խումբերն ու խօսիլ մարզիչին, բերդապահին, յետասպահին կամ յառաջապահին պատասխանատուութեանց մասին, ձախողութեան պարագային՝ «թնդանօթին բերանը» դրկել այս կամ այն): Օղանաւորութեան մէջ, ընդունուած օրէնք է, որ որոշ թիւէ աւելի ճամբորդ փոխարող օղանաւ մը պէտք է ունենայ մէկէ աւելի օղանաւոր, նաեւ՝ համապատասխան թիւով անձնակազմ: Ռուսական «Ալթոնով» օղանաւը այս իմաստով կը նկատուի օրինակելի փոխան մը, որովհետեւ զայն վարելու համար օղանաւորի խցիկին մէջ պէտք է ըլլան հինգ մասնագէտներ (տեսնել լուսանկարը) եւ մեծ թիւով անձնակազմ: Իսկ երկրի մը վարելը, մանաւանդ՝ Հայաստանի ներկայ վիճակին մատնուած երկրի մը, պէտք ունի շատ աւելի մեծ թիւով «անձնակազմի», եւ այդ մասնագէտներուն միջեւ ներդաշնակ ու համերաշխ գործակցութեան: Ըսել կ'ուզենք՝ օղանաւ վարելը եթէ հաւաքական պատասխանատուութիւն կ'ենթադրէ, երկրի մը վարելը օղանաւ վարելու հետ չի բաղդատուիր, շատ աւելի մեծ լրջութիւն կը պահանջէ: Հետեւաբար, մեր ժողովուրդէն կ'ակնկալուի վերջ տալ ԱՆՅԱԶՍԸ ԱՆՅԱՆՈՎ կամ միակ խըմբակով մը ՓՈՒՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ Մտածողութեան, որոնք համերաշխօրէն գործող անհատներէ բաղկացած վարչակազմ մը (նոյն հարկադրանքը՝ նաեւ կուսակցութեանց եւ քաղաքական խմբաւորումներուն, որոնք կը ծնին ու կ'անեանան որոշ անհատի մը առանցքին շուրջ):

Մասնագէտ-Արհեստավարներու Վարչակազմ

Արդէն հասանք մեր այս սիւնակներուն մէկ գլխաւոր կիզակետին, այսինքն՝ շեշտելու, որ Հայաստանի փրկութեան համար հրամայական է ԲՈՒՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՄԵՋ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՒ, ԳԻՏԱԿ ՈՒ ԲԱՆԻՄԱՑ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՏԵՂՄԱՆ, ԱՅԴ ՀԱՄԱՏԵՂՈՒՄԷՆ ԾՆԵԼԻՔ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ, որ պիտի գայ փոխարինելու այժմու անատակներու իշխանութիւնը, որ սիրողական իսկ չի կրնար նկատուիլ: Նման կազմի մը պաշտօնավարութեան տեւողութիւնը պիտի ճշդուի դէպի բնականոնացում երթին արդիւնքով:

Վերջերս, երբ նման հարցերու մասին կը գրուցէի սրտակից բարեկամի մը հետ եւ այս մտածումը արտայայտեցի, բարեկամս ըսաւ. «Ըսածդ խնեա-

լական է, սակայն իրականանալի չէ»: Զվիճեցայ հետը. հաւանաբար ընթերցողս ալ այս ընտրանքը պիտի գտնէ իտեպական, սակայն պէտք է նաեւ յիշէ, որ ցանկալի արդիւնքներու հասնելու, ազնիւ նպատակներ իրականացնելու համար ԻՏԵԱԼ-ը կենսական է: Իսկ թէ իտեպին ո՞ր բաժինը իրականութիւն կը դառնայ՝ արդէն շահը անկէ կը սկսի...

Նման կազմի մը յառաջացումը անկարելի բան չէ: Հայաստանի մէջ կան երկիր մը կառավարելու ատակ բոլոր ասպարէզներու մասնագէտներ: Կան քաղաքական ու դիւանագիտական հեղինակաւոր ու փորձառու անձեր, կան գիւտարարներ, ապահովութեան մասնագէտներ, տնտեսագէտներ, մշակոյթի մարդիկ (անոնց շարքին՝ կրօնաւորներ), պատմագէտներ, քարտեզագէտներ, Հայաստանի ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՍՏՈՒԹԵԱՆ մէջ հմուտ անձինք, միջազգային օրէնքէ եւ միջպետական յարաբերութիւններէ-գործակցութենէ հասկցողներ եւ այլն: Անոնք կը պատկանին այս կամ այն կուսակցութեան կամ խմբաւորումին, կրնան նաեւ որեւէ պատկանելիութիւն չունենալ, սակայն անպայման որ ունին մէկ հիմնական պատկանելիութիւն՝ կը պատկանին ՀԱՅՐԵՆԻՔԻՆ Եւ կը դաւանին, որ հայրենիքն ալ իրենց կը պատկանի: Նման մասնագէտներու մէկտեղումը ինքնաբերաբար երկրորդական կը դարձնէ, թէ ո՞վ պիտի ըլլայ վարչապետը, այլ իւրաքանչիւր նախարար հաւասարապէս պատասխանատու պիտի զգայ ՄԵՇ ԳՈՐԾԻՆ, առանց տարուելու այն ծանօթ մտածումով, որ «բոլորին գործը ո՛չ մէկուն գործն է» (Every body's business is no body's business): Զմտնենք օրինակներու ոլորապտոյտին մէջ յիշելու համար, որ արհաւիրքի մատնուած երկիրներ որոնած է գտած են ՀԱՄԱՅՈՒՄԱՆ ԴԵՎՈՒՄԱՆ ՄԱՐԲԵՐ ԾԵՆԵՐ, ինչպէս, օրինակի համար, վարչապետութիւնը փոխն ի փոխ վարելու ընտրանքը: Սա նաեւ մեզ կը հասցնէ այն կետին, որ «հիներ-նորեր»-ու հակադրութիւնը վերջ կը գտնէ, անիմաստ կը դառնայ նաեւ «երրորդ ուժ»-ի մը սպասումը: Եւ գաղտնիք չէ, որ մեր հայրենիքը ունի նաեւ... ճատրակի վարպետներ: Ահա նման կազմի մը պիտի վստահուի հայկական շահերէ բխող ճամբու քարտեզի մը կազմութիւնը, հետապնդումը:

Երբ ԲՈՒՆԱԿԱՆ ՎՈՐՄԵՐԸ համախոհութիւն գոյացնեն հայրենիքի փրկութեան մարտահրաւերը դիմակայելու ատակ մարդոց կազմի մը շուրջ, յաջորդ քայլը պէտք է ըլլայ, այսպէս կոչուած՝ քաղաքական «առաջնակարգ դէմքերու» (որոնք կրնան նուիրեալ եւ հայրենասէր գործիչ ըլլալ, սակայն ո՛չ մասնագէտ) մէկ քայլ ետ կանգնիլը, որպէսզի ԳՈՐԾԻ ՀՐԸՊԱՐԱԿԸ ազատ մնայ մասնագէտներուն առջեւ: Սա չի նշանակէ, որ քաղաքական գործիչները, անոնք ըլլան կուսակցապետ կամ խմբաւորումներու ղեկավար անդամ, իրենք զիրենք պէտք է «հանգստեան կոչուած» գգան, այլ ընդհակառակը, իրենց անհատական եւ պատկանած կուսակցութեան-խըմբաւորումին բոլոր կարողութիւնները դնեն ի սպաս միասնութիւնը մարմնաւորող վարչախումբին: Այս երկու համակերպումն օղակները պիտի կազմեն առաջադրուած աշխատանքին կորիզը, յետարանը, մեկնակետը:

Յաջորդ օղակները նոյնքան կենսական են: Իւրաքանչիւր ոլորտ իր դիմաց ունի այնպիսի վիթխարի, ամեհի՜ աշխատանք, որ չի կրնար իրականանալ կառավարող իտեպական վարչախումբով մը (անունը անշուշտ պիտի ըլլայ գործադիր իշխանութիւն, կառավարութիւն), այլ նախարարները իրենց կողքին պիտի ունենան ԱՇԽԱՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ, սկսելու համար՝ «ուղեղներու հաւաք»-ներ (Think tanks), որոնց առաքելութիւնը պիտի ըլլայ ակնդէտ հետեւիլ ներհայաստանեան, շրջանային եւ աշխարհատարած գարգացումներուն, գործնական խորհրդատուութիւն պիտի կատարեն նախարարներուն հետ, պիտի դառնան մասնագիտական աշխատանքի լծակից-գործակիցները: Հո՛ս ալ «ես այսպէս անելի յարմար կը նկատեմ»-ը պիտի դրուի սառնարան, եւ հայրենիքի փրկութեան համար անհրաժեշտ ՄՆԵՐ-ը պիտի ըլլայ տիրական:

Եւ այսպէս՝ աշխատանքային խմբակներու օղակները քայլ առ քայլ ծաւալ պիտի գտնեն, պիտի տարածուին մայրաքաղաքէն մինչեւ մօտակայ ու հեռաւոր քաղաքներ, գիւղեր, սահմանամերձ գօտիներ եւ հասնին... Սփիւռք: Մէկ խօսքով, Հայաստանը (որ կը ներառէ Արցախը) այս վիթխարի աշխատանքին մէջ միակ պիտի չձգուի, այլ պահանջուած համախոհութիւնը պիտի տարածուի նաեւ Սփիւռքի վրայ, Սփիւռքի մասնագէտներ եւս պիտի ներգրաւուին այս գործին մէջ: Պէտք կ'այ՛ն կրկնելու, որ սփիւռքը մեր հայրենիքին մէկ յենարանն է ու լծակիցը: Սա ինքնաբերաբար կը նշանակէ, որ Հայաստան-Սփիւռք կապերը, յարաբերութիւններն ու գործակցութիւնը պէտք է ցատկէն վերջին տարիներուն խորացուած խրամատներուն վրայէն, վերականգնին նախկին կամուրջները, կառուցուին նորեր: Պատանձումի պիտի մատնուին բոլոր այն իմաստակներն ու թերահաւատները, որոնք այսօր գերի դարձած են «եռամիասնութիւնը անկարելի է» մտածողութեան, ներշնչուած՝ հայրենիքի եւ ազգի իմաստն ու արժէքը չճանչցող իշխանաւորներու «իմաստասիրութենէն», Հայաստան-Սփիւռք կապերը քանդելու «խիզախումներէն»:

Անկարելի Առաքելութիւնը՝ Կարելի

Տասնամակներ առաջ կար պատկերասփիւռային շարք մը (սերիալ), որուն խորագիրն էր «Անկարելի առաքելութիւն» (Mission Impossible): Հերոսները կը լծուէին անկարելի թուացող ու վտանգալից, արկածալի առաքելութիւններու եւ միշտ ալ յաջողութեամբ կ'աւարտէին իրենց գործը, կը խնային հակառակորդի քրիչը:

Իրական կեանքը ժապաւէն կամ պատկերասփիւռային շարք չէ, սակայն «Անկարելի առաքելութիւն» եզրը ի գօրու է նաեւ քաղաքական-դիւանագիտական աշխարհին մէջ, պատերազմական գործողութիւններու ոլորտին, մինչեւ իսկ՝ գիտական աշխարհին եւ այլն: Առաջադրուած վարչախումբը ի սկզբանէ պիտի գիտնայ, որ ինչպիսի՜ գործի կը իրաւիրուի, իր

ՊՐԻՔՍԵԼԻ ՄԷՅ ՏԵՂԻ ՈՒՆԵՃԱԼ

ՓԱՆՏԻՆԵԱՆ-ՄԻՇԷԼ-ԱԼԻԵԻ ԵՌԱԿՈՐԱՎ ՀԱՆՌԻՊՈՒՄԸ

Շաբաթ, 15 Յուլիս 2023-ին Պրիքսելի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Ատրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիեւի եւ Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշելի եռակողմ հանդիպումը, որուն աւարտին Միշել կատարեց հետեւեալ յայտարարութիւնը.

«Քիչ առաջ աւարտեցինք նախագահ Ալիեւի եւ վարչապետ Փաշինեանի հետ վեցերորդ հանդիպումը: Մեր միտքերու փոխանակումները կրկին եղան անկեղծ, ազնիւ եւ առարկայական:



«Մեր հանդիպումը վերջինս էր Պրիքսելի, Քիշնեւի, Ուաշինկթընի ու Մոսկուայի մէջ եւ երկկողմանի սահմանին վրայ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն, փոխվարչապետներուն եւ արտաքին գործոց նախարարներուն մասնակցութեամբ աշխուժ եւ արդիւնաւետ բարձր մակարդակի հանդիպումներու շարքին:

«Մենք կ'անցնինք Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւններու ամենէն ընդգրկուն եւ եռանկուն մէկ փուլէն:

«Ես ղեկավարները ողջունեցի խաղաղութեան հոլովոյթին իրենց յըստակ յանձնառութեան համար եւ յորդորեցի այսուհետեւ խիզախ քայլերու ձեռնարկելու՝ լուծման ճամբուն վրայ վճռական եւ անշրջելի յառաջընթաց ապահովելու համար:

«Ու թէեւ մեր հանդիպումը տեղի ունեցաւ գետնի վրայ լարուածութեան աճի մտահոգիչ պայմաններու մէջ, սակայն ես ընդգծեցի քաղաքական քննարկումներուն եւ ջանքերուն մէջ կարելի է այս պահը: Մենք քննարկեցինք օրակարգային բոլոր հարցերը:

1.- Գերիշխանութիւն եւ տարածքային ամբողջականութիւն

«Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարները անգամ մը եւս ամբողջովին վերահաստատեցին իրենց յարգանքը իրարու տարածքային ամբողջականութեան եւ գերիշխանութեան նկատմամբ: Ատիկա կը հիմնուի այն ըմբռնումին վրայ, որ Հայաստանի տարածքը 29800 քառակուսի քիլոմետր է, իսկ Ատրպէյճանի տարածքը՝ 86600 քառակուսի քիլոմետր:

2.- Սահմանազատում

«Երկու ղեկավարներն ալ վերահաստատեցին իրենց յստակ յանձնառութիւնը 1991 թուականի Ալմա Աթայի հռչակագրիին նկատմամբ՝ իբրեւ սահմանազատման քաղաքական շրջանակ:

«Ես ողջունեցի 12 Յուլիսին սահմանային երկու յանձնախումբերու հանդիպումը: Աշխատանքները յառաջ շարժեցան այս յանձնախումբերու կառուցողութեան եւ սահմանազատման հիմքերու վերաբերեալ քննարկումներուն շուրջ: Շատ կարելի է նկատել, որ ղեկավարները համաձայնեցան աշխուժացնել եւ արագացնել յանձնախումբերու աշխատանքը:

3.- Փոխկապակցում

«Փոխկապակցման հարցին մէջ, կողմերը նաեւ յստակ յառաջընթաց արձանագրեցին վերջին երկու ամիսներու ընթացքին շրջանին մէջ փոխադրամիջոցային եւ տնտեսական կապերու ապաշրջափակման ուղղուած իրենց քննարկումներուն մէջ:

«Մենք քննարկեցինք ձեւերը ապագայ փոխադրամիջոցներու, որոնք պիտի յարգեն գերիշխանութեան, իրաւասութեան եւ փոխադարձութեան սկզբունքները:

«Պետք է անյապաղ ձեռնարկել երկաթուղային կապի կառուցման: Եւրոպական Միութիւնը պատրաստ է ֆինանսական աջակցութիւն ցուցաբերելու:

«Որոշ մանրամասնութիւններ տակաւին յստակացում կը պահանջեն, սակայն այս սկիզբին շուրջ դիրքորոշումները այժմ աւելի կը մօտենան, եւ տարբերակները աշխուժօրէն կ'ուսումնասիրուին:

4.- Մարդասիրական հարցեր

«Մենք քննարկեցինք Ղարաբաղի հայ բնակչութեան վիճակը եւ Լաչի-

նի միջանցքին շուրջ ստեղծուած կացութիւնը: Ներկայ կացութիւնը ակընյայտօրէն կայուն չէ եւ չի բխիր ո՛րէն մէկուն շահերէն: Զննարկեցինք նաեւ հաւանական որոշակի քայլեր, որոնք պիտի օգնեն բնական հունի վերադարձնել կացութիւնը:

«Ես ընդգծեցի Լաչիի ճամբուն բացման անհրաժեշտութիւնը: Նշեցի նաեւ Ադտամի միջոցով մարդասիրական մատակարարումներ կատարելու Ատրպէյճանի պատրաստակամութիւնը: Ես երկու տարբերակներն ալ կարելի էր կը նկատեմ եւ կը խրախուսեմ մարդասիրական առաքումներ կատարել երկու կողմերէն՝ բնակչութեան կարիքները ապահովելու համար: Ես ողջունեցի նաեւ Կարմիր խաչի Միջազգային Կոմիտէին կողմէ բժշկական տարհանումներու վերսկսումը:

5.- Իրաւունքներ եւ Անվտանգութիւն

«Այդտեղ գտնուող բնակչութիւնը կարիք ունի հաւաստումներու՝ նախ եւ առաջ իր իրաւունքներու եւ անվտանգութեան ապահովման վերաբերեալ: Այս ծիրին մէջ ես յայտնեցի Եւրոպական Միութեան՝ Պաքուի եւ Նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին մէջ բնակող հայերու ներկայացուցիչներուն միջեւ ուղիղ երկխօսութեան ծաւալման մասին յորդորը: Այս երկխօսութիւնը պետք է ապահովէ շատ անհրաժեշտ վստահութիւն բոլոր ներգրաւուածներուն համար:

6.- Կալանաւորներ

«Քննարկեցինք նաեւ կալանքի տակ գտնուող անձերու հարցը:

«Ղեկավարները վերահաստատեցին իրենց յանձնառութիւնը փոխըմբռնման այն մասին, որուն համաձայն անգուշօրէն միւս կողմ անցած զինուորներու ազատ արձակումը պիտի արագացուի:

«Ես կողմ արտայայտուեցայ այն կարծիքին, որ երկու կողմէն ալ ազատ արձակուին կալանքի տակ գտնուողները:

«Քննարկուեցաւ նաեւ անհետ կորսուածներու ճակատագրի եւ ակա-նագերծման հարցերուն մէջ շեշտակի գործակցութեան ապահովման կարեւորութիւնը, եւ ես անգամ մը եւս կողմերուն կոչ ուղղեցի կարելի եղածին չափ շատ տեղեկութիւն փոխանակելու:

7.- Հետագայ ընթացք

«Մենք համաձայնեցանք, որ մեր խումբերը մասն սերտ կապի մէջ՝ ապահովելու որոշակի հետեւողականութիւն այսօր քննարկուած նիւթերուն շուրջ:

«Իրական յառաջընթացը կախեալ է յաջորդ քայլերէն, որոնք պետք է ձեռնարկուին մօտիկ ապագային: Իբրեւ առաջնահերթութիւն՝ խաղաղութեան եւ լուծման բանակցութիւններու համար պատշաճ միջավայր ապահովելու համար:

«Վերահաստատեցի նաեւ մտադրութիւնս Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարները իրաւորելու այս ամառուընէ ետք Պրիքսելի մէջ կայանալիք մէկ այլ հանդիպումի, ինչպէս նաեւ հերթական հնգակողմ հանդիպումին՝ Ֆրանսայի եւ Գերմանիոյ ղեկավարներու մասնակցութեամբ Բա-նատայի մէջ՝ Եւրոպական Զաղաքական համայնքի յաջորդ վեհաժողովի ծիրին մէջ»:

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան Յայտարարութիւնը


Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը եռակողմ հանդիպումին մասին հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեց, որ հանդիպումին ընթացքին քննարկուած են Ատրպէյճանի կողմէ Բերձորի միջանցքի ապօրինի փակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած խորացող մարդասիրական ճգնաժամին, երկու երկիրներուն միջեւ սահմանազատման եւ սահմանային անվտանգութեան ապահովման աշխատանքներուն, շրջանային փոխադրամիջոցային եւ տնտեսական ենթակառուցներու ապաշրջափակման, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման համաձայնագրիին, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի իրաւունքներու եւ անվտանգութեան հասցեագրման, ինչպէս նաեւ գերիներու, անհետ կորսուածներու եւ այլ մարդասիրական խնդիրներուն վերաբերող հարցեր:

Համաձայնութիւն ձեռք բերուած է աշխուժացնելու աշխատանքները քննարկուած հարցերու լուծման գծով:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ
ԱՐՏԱԽԱԶԴ ՏՆԿԻԿԵԱՆԻ (ԱՊՈՒ ԱԶԻԶ)
ԵՒ
ԲԵՆԵԼՈՒ ՏՆԿԻԿԵԱՆԻ

Հանգուցեալներուն հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Յուլիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Աննահ Պատարագի, Ս. Զառանկից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան բարերարներուն յիշատակի թարմացման հանդիպում տեղի պիտի ունենայ «Ն. Աղբալեան» սրահը:


ՊԱՏՈՒԵՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ



Հայկ Պաթախյան

Օրեր առաջ, մեզ մե առ յաւետ բաժնուեցաւ ամերիկահայ պատմագետ, տասնեակ արժեքաւոր գիրքերու հեղինակ Ռիչըրտ Յովհաննէսեանը: Մեծ անուն, որ ցաւօք հայ հասարակութեան նկատառելի մասին ծանօթ է: Ըլլալով բացառապէս գիտութեան եւ ճշմարտութեան սպասարկու, տղթք Յովհաննէսեան անաչառօրէն ուսումնասիրեց մեր արդի պատմութեան կարեւորագոյն իրողութիւնները, Յեղասպանութիւնը, անկախութիւնն ու առաջին հանրապետութիւնը, խորհրդայնացման եղանակը եւ այլն: Որպէս արդիւնք, ան յաջողեցաւ լուսաւորել մեր պատմութեան որոշ մութ ծալքերն ու եղելութիւնները, արժանանալով հայ յառաջդիմական խաւերու գնահատանքին, իսկ յետադիմականներու կշտամբանքին: Բացառիկ գիտական արժանիքներու տեր ըլլալով եւ հսկայ աշխատանք տանելով, ան արժանացաւ հայ դեկաւար ու մտաւոր շրջանակներու համակրանքին ու յարգանքին, բայց ոչ անելիին՝ ինչին կատարելապէս արժանի էր:

Կորուստի այս պահը առիթ է անդրադառնալու մեր շրջանակներէն ներս տիրող երեւոյթի մը՝ հայ մտաւորականին հանդէպ տիրող անտարբերութեան: Յովհաննէսեանին նախորդեցին այլ մտաւորականներ, գիտական ասպարէզի մէջ փայլուն դէմքեր, ինչպէս օրինակ իր գործընկեր, վաստակաշատ պատմաբան Վահագն Տատրեանը, համբաւաւոր բանաստեղծ ժազ Յակոբեանը, «Ես կը ծուլնեմ ես» հանրածանօթ գիրքի հեղինակ՝ խմբագիր Պօղոս Սևապեանը եւ շատ ուրիշներ: Զանի՞ հոգիներ կը ճանչնան յիշուած անունները: Ահիլ-ջահիլ երիտասարդութիւնը ի՞նչ գիտէ իրենց մասին: Ինչո՞ւ այս անձնավորութիւնները շուքի մէջ մնացած են եւ իրենց փոխարէն պատնէշի վրայ շարունակ ներկայութիւն ունեցած կարգ մը ապաշտոր կղերականներ, փտած ու նեխած քաղաքական գործիչներ, չակերտեալ բարերարներ, մշակոյթ նուաստացնող «արուեստաբան»-ներ, եւ ոչ թէ պատուաւոր ու ստեղծագործական վաստակ ունեցող անձնավորութիւններ: Ի՞նչ կը նշանակէ այս երեւոյթը, եթէ ոչ մարդկը գնահատելու բնական չափանիշներու խախտում ու խտրում:



Սոյն երեւոյթը յատուկ չէ մեզի, այլ ընդհանրացած է յետամնաց շրջանակներու մէջ եւս, ժամանակ կար երբ այս երեւոյթը գլուխ կը ցցեր նաեւ եւրոպական-ամերիկեան ոստաններու մէջ: Ո՞վ չի ճանչնար հանրածանօթ գծագրիչ Վինսընթ Վան Կոկը, որուն կեանքին ընթացքին արուեստի իր ստեղծագործութիւնները հասարակութեան լայն շերտերու մօտ ընդունելութիւն չէին գտներ: Ան ապրեցաւ անտեսուած թէ՛ հանրութեան, եւ թէ՛ արուեստի շրջանակներուն կողմէ, ինչ որ պատճառ դարձաւ իր հոգեկան եւ մտային տաքման սաստկացման: Ցաւալի է իմանալ, թէ պարզապէս իր մահէն տեք մարդոց գնահատականը կտրականապէս փոխուեցաւ: Անտեսուած արուեստագետը յետ մահու գնահատանքի արժանացաւ եւ անցաւ այլ մեծ գծագրիչներու շարքին: Այլ ասպարէզի մէջ, ելեկտրագետ Նիքոլա Թեյլան, որ իր մարգի հանճարներէն եւ գիտարարներէն ըլլալով, բազմատեսակ գիտական թէ արհեստագիտական ներդրումներ ունեցաւ այս ոլորտին մէջ, ապրեցաւ ու գործեց արքատութեան ու ճշունածութեան մէջ, իր ետին ձգելով գիտական-արհեստական հսկայ ժառանգութիւն եւ նիւթական հսկայ պարտք: Կը հասնիմ մինչեւ ինծի համար հարազատ դէմքի մը, ամերիկեան գրականութեան հռչակաւոր գրիչներէն Էտկար Փոնի, որ հետաքննական գրական սեռի հիմնադիրներէն ըլլալով համապատասխան գնահատանքի չէ արժանացած եւ ամերիկացի ժողովուրդը միայն իր վաղաժամ մահէն տեք գինք պատուած է:

Արեւմուտքը, սակայն, քաղեց պետք եղած դասը, փոխեց իր մօտեցումը գիրի, արուեստի ու գիտութեան ոլորտներէն ներս ներդրում ունեցողներուն հանդէպ: Ան առաւելաբար սկսաւ աշխարհի չորս կողմերէն ընտրեալ ստեղծագործ միտքերը ներգրաւել եւ օգտագործել ի նպաստ իրեն: Իսկ մենք, բացի հագուկապէն ու ժողովրդային կենցաղէն, այլ սորվելիք չունինք Արեւմուտքի ժողովուրդներէն:

Չարթնիք, մեր հին սերունդի մտաւորականները մէկ առ մէկ կը հեռանան, հսկայ ժառանգ թողելով առանց ժառանգորդի, իսկ ուրկէ՞ գտնել ժառանգորդ, երբ հայ երիտասարդը կը տեսնէ մտաւորականը անտեսուած, պետք եղածին պէս չգնահատուած, երբեմն նաեւ չարաչար շահագործուած:

Չխօսիք այն մասին, թէ ո՞վ որո՞ւն բացը պիտի գոցէ: Խօսիք ու աշխատիք մտաւորականին հանգամանքը վերադարձել: Սկզբնական քայլը ներկայ մատներու վրայ հաշուընդ մտաւորականներուն տարբեր աշխատանքներու մէջ ներգրաւելն ու պատշաճ վարձատրութիւնը կատարելն է:

ՆԱՅՐԵՆԻՔԻ...

Սկիզբ՝ էջ 4

ռատարները լայն պիտի բանայ Հայաստանի սահմաններէն ներս թէ դուրս տարածուող դաշտերուն վրայ: Պիտի գիտակցի, որ Հայաստան ինկած է շատ վտանգաւոր վիճի մը յատակը, որմէ դուրս գալու համար գերմարդկային կարողութիւն պետք է, «խենթերու հնարներ» կը սպասուին: Հոն ո՞չ այլ թող թէրեւոյ-պահելու, ո՞չ ալ մրցակիցէն արձու (ներ) խլելու հարց կայ: Նման բաներ եթէ որոշ տրամաբանութեան մը կը հետեւին եւ ընդունելի կը նկատուին բնական պայմաններ ապրող երկիրներու մէջ, Հայաստանի ներկայ վիճակը նման պերճանք չի թոյլատրեր: Այլ խօսքով, կազմուելիք կառավարութեան առաջնահերթ գործերէն մէկը պիտի ըլլայ պատմել այն ստապատիր վարապոյթը, թէ ԶԴ-ական «քալողներու» խմբակը փոխ արհնողը աթոռակոծ տարուած է (ա՛յդ կ'ընեն ԶԴ-ականները, առաւել կամուրջ չափով Նոյն մտածողութիւնը կար նաեւ նախկին իշխանութիւններու օրերուն):

Փաստօրէն, նոր կառավարութեան մաս կազմողը, նման յանդգնութիւն ունեցողը իրագրել պիտի ըլլայ, որ ո՞չ միայն «Անկարելի առաքելութիւն» մը կը վստահուի իրեն, այլ «անձնասպանական առաքելութիւն» մը (վերջերս քաղաքական բազմաթիւ գործիչներ կը գործածեն «մահապարտներու կառավարութիւն» եզրոյթը): Ինչո՞ւ «անձնասպանական» Որովիտեալ կառավարութեան մաս կազմողներուն անհատական կամ հաւաքական ճախողութիւնը (յամենայնդէպս ճախողիլը արգիլուած պտուղ է) մահացու պիտի ըլլայ Նոյնիսն հայրենիքին ու ազգին համար: Զախողելու պարագային, «Դամոկլեան սուրը» առկա պահող թելը պիտի փրօթի, տապարը պիտի իյնայ ո՞չ թէ «Գորդեան հանգոյցը» կտրել շանացողներուն, այլ՝ հայրենիքին ու ազգին զխուսն:

Աւելորդ չենք նկատեր ընդգծելը, թէ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ՝ նորահաս երիտասարդները, պետք է «ձեռքով-ուտքով» ներգրաւուին այս առաքելութեան մէջ:

Իսկ թէ ի՞նչ պիտի ըլլան կարողութիւններ եւ ուղեղներ մէկտեղող վարչակազմին գործի դաշտերը, նմանապէս յստակ է. հպանցիկ ակնարկներով պիտի խօսիք յաջորդի:

WE ARE ALL...

Սկիզբ՝ էջ 8

ո՞ր է սահմանը հայ ըլլալու: Ո՞վ կըրնայ թելադրել հայու ինքնութեան ճուշդ-

մարիտ կերպարը այսօր, երբ անձը ինքզինք հայ կը գգայ ի՞ր ձեւով, մասնաւոր արեւմուտքի երկիրներուն մէջ, ուր հին գաղութները կը կորսնցնեն իրենց լեզուն, իսկ նորերը կամ արեւելքէն նոր գաղութներու հետեւանքով թարմացած գաղութները դեռ կը ջանան պահել գայն: Եթէ նախապէս «տուփին մէջ» չբաւող հայերը, այլ խօսքով հայերէն չխօսող հայերը դուրս կը սեպուին հայախօս համայնքէն, այսօր «տուփէն դուրս» եղողներուն թիւը կը գերակշռէ այս կողմերը: «Ընթերցումներէն յետոյ, հարց-պատասխանի ընթացքին, ինծի հարցուեցան հետեւեալ հարցումները. «Բոլորդ հա՞յ էք, հայերէն կը խօսի՞ն, ամուսինդ հա՞յ է, չէրեկ շինել գիտե՞ն...» Առաջին անգամս եր, որ գիտ ստիպեցին զգալ, թէ ես պետք եղածին չափ հայ չեմ...» (Ն. Գ. էջ 60):

Կը գիտակցիք նիւթի խորութեան, սակայն կը հաւատանք Սփիւռքի գոյութեան եւ անոր շարժման երեւոյթին: Ոչ թէ միայն լեզուի հարց է, այլ ամբողջ ինքնութեան դիմագիծի: Մտածելու ձեւն իսկ փոփոխութեան կ'ենթարկուի այդ շարժման մէջ: Եւ այդ անընդհատ փոփոխումի, անկայունութեան եւ անյստակութեան երեւոյթը ինքնին մեր ինքնութիւնը կը կազմէ իբրեւ սփիւռքահայեր: Կ'ընդունինք, որ Սփիւռք հասկացութիւնը շատ մեծ երեւոյթ է եւ կարելի չէ ընդգրկել գայն մէկ պարունակի մէջ: Կան հայեր, կիսահայեր, հայախօս հայեր, օտարախօս հայեր: Փոխանցումը այս պարագային կարելի էր կը խաղայ, որպէսզի անցեալէն չկըտրուի նոր սերունդը: Այս մասին առաւել լաւատես երանգով կ'ամփոփէ իր միտքերը «We Are All Armenians» գիրքի հեղինակներէն Սկաւոր թիւֆեքճեան:

«Հասակ առնելով կը մտածէի, որ կայ փոքրիկ տուփ մը, որուն մէջ պետք է սեղմուիլ՝ լաւ հայ համարուելու համար: Տուփ մը, որուն մէջ ես չկրցայ տեղաւորուիլ, բայց իմ ճամբորդութիւններս ցոյց տուին, որ բոլորիս համար ալ տեղ կայ այդտեղ. հայ մեծ ընտանիքին մէջ բոլորս ալ հայ ենք կիսով հայ ըլլալով հանդերձ, հայ ենք դաշնակ թէ հընչակ, հաւատացեալ թէ այթիստ, հայ ենք՝ միասնեական ըլլանք թէ ոչ, հայ ենք մուգ գոյնի ըլլանք, թէ շէկ, հայ ենք հարիւր առ հարիւր դասական, թէ արդի ինքնութեան վիճակներով... մենք բոլորս մեր ազգի ապագային համար դերակատարութիւն ունինք կատարելիք... մեզ մէ իւրաքանչիւրը ունի հայ ըլլալու եւ ընդհանուր համայնքին հետ առնչուելու իր ուրոյն ձեւը, եւ երբ մենք իրարու հանդիպինք՝ կապը որոշ է» (Ս.Թ. էջ 213):

www.kantsasar.com

Պրիմակետ

ՊԱԽՐԱՍՊԱՆԸ (The Deerslayer)



Մարուշ Երամեան

1841 թուականին Անգլիոյ մէջ լոյս տեսած վիպաշարքի մը հինգ հատորներուն վերջինն է այս գիրքը, գրուած James Fenimore Cooper-ի կողմէ: Վեպերուն ժամանակաշրջանը 1740-1745 է, իսկ հերոսը՝ Natty Bumppo, մէկը որ կ'ապրի ԱՄՆ-ի Նիւ Եորք նահանգին մէջ, Otsego լիճին շրջակայքը տեղ մը:

1895 թուականին Mark Twain հեգնական յօդուած մը կը գրէ Ֆենիմոր Գուլբրի դէմ, ծանրօրէն շեշտելով «Պախրասպան»-ին եւ նախորդ գիրքերուն ձախողութիւնները:



Սակայն John McWilliams կը ջրէ Թուելսի յօդուածը եւ անոր հեգնանքը նեղմտութեան կը վերագրէ ...

Կը տեսնենք, թէ 18-րդ դարու այս ոչ այնքան հռչակաւոր գիրքը ատենին որքան բանավէճի առիթ տուած է: Բայց ինչո՞ւ կ'անդրադառնանք անոր այստեղ, մեր էջին, երբ այնքան աւելի եական հարցեր ունինք քննարկելիք:

Երբ գիրքի մը կը հանդիպինք, որուն մասին գրեթէ ոչինչ գիտենք, մեր հետաքրքրութիւնը կը սրի, մասնաւոր երբ այդ գիրքը կը կապուի այլ գիրքի մը, այս պարագային՝ «Պախրասպան»-ին: Թէ ի՞նչ ձեւով ...

«Տէր Աւետիք Բահանան» գիրքը հրատարակուած է Գեորգ Իփճեանի «Պատանիին Մատենաշարը» շարքով, տպուած Պէյրուք, 1960 թուականին, Սանահին տպարանէն ներս: Գիրքը մաս կը կազմէ «Լիբանանահայ Գիրքը 1894-2012 Մատենագիտական Ցանկ» հատորին:

Գիրքին սկիզբը, տիտղոսաթերթէն առաջ հետեւեալ գրութիւնը կը կարդանք.

«Այս գիրքը յարմարուած է Հայոց Պատմութեան մէջ յիշուած շրջանի մը, J. Fenimore Cooper-ի The Deerslayer հատորէն, ամբողջական հայացում մը ընելու մտահոգութեամբ: Գ. Ի. »:

Բարեբախտաբար գիրքը կայ մեր ձեռքին տակ. անոր ընթերցումը կը յստակացնէ թարգմանիչին ծրագիրը՝ «Պախրասպան» գիրքին հետեւութեամբ, նոյն դիպաշարով եւ շատ նման բնութեան մը մէջ փոխադրել վէպը, գայն ոչ թէ թարգմանելով, այլ՝ հայացնելով:

Ատիկա ընելու համար Գ. Իփճեան անշուշտ կը դիմէ պատմութեան եւ «Պատմական Ակնարկ»-ին մէջ կը ներկայացնէ հայոց կացութիւնը իր գրած վիպակի ժամանակաշրջանին.

«Հայաստանի Արցախ, Ուտի եւ Սիւնիք նահանգները, որոնք հիմա-կուան Ղարաբաղն ու Արդան պետութեան մէջ մասը կը կազմեն, պարսիկներու Շահ Աբբաս Ա. -ի կարգադրութեամբ հինգ կիսանկախ հայ իշխաններու յանձնուեցան: Այս իշխանները կոչուեցան Սելիքներ: Ասոնցմէ դուրս կային նաեւ ուրիշ գաւառներու վրայ տիրող, սակայն երկրորդական-երրորդական արժէք ներկայացնող հայ մելիքներ»:

«Ղարաբաղի հինգ Սելիքներէն մէկը կը նստէր Գիւլիստան կամ Թալիշ գաւառը, երկրորդը՝ Զրաբերդ կամ Զարաբերդ, երրորդը՝ Խաչէն, չորրորդը՝ Վարանաղա, իսկ հինգերորդը՝ Տիգակ կամ Տուգախ գաւառը»:

«Շահ Աբբասի յաջորդներուն օրով, Էջմիածնի Յակոբ Դ. Զուղայեցի կաթողիկոսը (1655-1680) Էջմիածինն ու Ղարաբաղի կիսանկախ մելիքութիւնները պարսիկներու լուծէն ազատելու եւ ազգային անկախութիւն բերելու նպատակով, 1678-ին կաթողիկոսարանին մէջ գաղտնի ժողով մը գումարեց, որուն մէջ խորհրդակցութեան առարկայ եղան եւրոպական պետութիւններէն եւ հռոմի Պապէն օգնութիւն խնդրելու կարելիութիւնները:

Այս ժողովին որոշման համաձայն, Սելիք Իսրայէլ Օրին եւ Կաթողիկոսը պատգամաւորութիւն մը կ'ազմելով ճամբայ ելան դէպի Եւրոպա: Սակայն երբ Պոլիս հասան, Կաթողիկոսը հիւանդանալով վախճանեցաւ, եւ պատգամաւորութիւնը ետ դարձաւ, բացի Օրինէն, որ տարի մը շարունակ արկածալից ճամբորդութիւններ կատարեց, յուսալով որեւէ երկրէ դրական օգնութիւն գտնել: Եւրոպայէն յուսահատ, Օրի, հետը առնելով Տիգրանեանց Միւնաս Վարդապետը, անցաւ Ռուսիա: Պետրոս Մեծ Ցարը նոյնպէս իրեն բաւական մեծ եւ դրական յոյսեր ներշնչելէ ետք, ի վերջոյ մերժեց այնպիսի հայ մելիքներուն ապստամբական շարժումներուն»:

«Սելիքները տեսնելով որ Մեծն Պետրոսէն ալ յոյս չկայ, Ղարաբաղի հարաւային կողմերը, Ղախանի շրջանին մէջ երկու տարիէ ի վեր (1722) մեծ յաջողութիւններով գործող Սիւնեցի Դաւիթ Բեկին միացան եւ ընդհանուր ապստամբութիւն մը յայտարարելով անկախութիւն հռչակեցին»:

«Դաւիթ Բեկի սպայակոյտին գլխաւոր անդամներն էին Մխիթար Սպարապետ, Հալիճորեցի Սելիք Փարսադան, անոր փեսան՝ Տէր Աւետիք Բահանան, Թորոս Իշխան, Բալի գորավար ու Սելիք Ստեփանոս Շահումեան»:

«Ապստամբութիւնը շատ յաջող անցաւ եւ առաջին անգամ պարսիկներուն վրայ յարձակելով, ետ մղեցին գանոնք: Բայց Դաւիթ Բեկին վարած խումբը Նախիջեւանի մօտ պարտութիւն կրելով, ստիպուեցաւ պահ մը Հալիճորի բերդին մէջ ամրանալ: Իսկ Ստեփանոս Շահումեան երկու հազար հոգիով Սեղրի քաղաքին առջեւ ջարդուփշուր ըրաւ պարսկական զօրքը, ինչպէս նաեւ միւս գորավարները սարսափի մատնելով, վանեցին թուրք-մէններն ալ: Եւ սակայն երեք տարի վերջ օսմանցիները վրայ հասան եւ Հալիճորի մէջ պաշարեցին Դաւիթ Բեկը: Տէր Աւետիք քահանան անմիջապէս օգնութեան հասաւ եւ երեք հարիւր հոգիով ջարդեց ցրուեց թշնամին (1727): Ասոր վրայ Դաւիթ Բեկ հաշտուեցաւ պարսիկներուն հետ եւ Շահ Թահմազ Բ. -ի կողմէ Ղարաբաղի ընդհանուր հրամանատար եւ իշխանաց իշխան կարգուելով, տեղի ազդեցիկ մահմետականներն իսկ իրեն հնազանդեցուց: Յետոյ անցաւ Սեղրի եւ Օրդուբադը գրաւելէ ետք, Ազուլիսի մօտակայ Թովմաս Առաքեալին վանքը բանակեցաւ եւ պահանջեց, որ Ազուլիս անձնատուր ըլլայ: Բայց որովհետեւ Ազուլիսի Սելիք Մուսի իշխանը Դաւիթ Բեկի հակառակորդն էր, չուզեց քաղաքը յանձնել եւ իրեն դիմող պատգամաւորը՝ Սելիք Փարսադան գողակի հարուածով մը սպանել տուաւ: Ուստի Դաւիթ Բեկ դառն կակիծով հեռացաւ անկէ»:

«Ասոր վրայ շատ չապրեցաւ Դաւիթ Բեկ եւ 1928-ին մեռաւ, իրեն յաջորդ ձգելով Մխիթար սպարապետը, որ սակայն յաջորդութեան պատճառով իրեն հակառակորդ ունեցաւ իր ընկերներէն Աւետիք Բահանան, որուն մատնութեան պատճառով օսմանցիները վերջնականապէս տիրեցին Ղարաբաղին, 1729 թուին: Մխիթար թէեւ Ղախանը ձգելով հիւսիս փախաւ եւ Խնձորեսքի բերդին մէջ հաստատուելով օսմանցիներուն վրայ յարձակեցաւ, բայց շուտով Խնձորեսքի բնակիչներուն դաւաճանութեան գոհ գնաց, 1730-ին»:

«Իսկ Տէր Աւետիք Բահանան, նոյնպէս մոնկոլ-օսմանցիներէն հետապնդուելով, իր կնոջը եւ երկու աղջիկներուն հետ ապաստանեցաւ Դի-գափայտի լեռներուն վրայ գտնուող անոյշ ջուրի Փայլուն լիճը, ուր անցուց իր վերջին տարիները»:

Տէր Աւետիք Բահանային վերջին տարիներուն, Փայլուն լիճի ափին անցուցած տարիներուն մասին է այս վիպակը, որուն «Պատմական Ակնարկ» կարդալով կ'անդրադառնանք բարակ եւ կարմիր գիծի մը գոյութեան մեր պատմութեան բոլոր էջերէն անցնող, որ այսօր եւս իր գոյութիւնը կը փորձէ պարտադրել:

Մոնկոլները, օսմանցիներն ու թուրքերը երկու յատկութիւն ունին՝ անոնց թիւը շատ մեծ է եւ անոնք յամառօրէն կը հետապնդեն իրենց նպատակները, որոնց առջեւ մենք, հայերս, գիտակցելով մեր թիւին անհամեմատօրէն փոքր ըլլալուն, կը մտածենք՝ աւելի լաւ չէ՞ պատերազ մի փոխարէն համաձայնի, հաշտութիւն կնքել եւ խաղաղ ապրիլ ... (Պետք չէ՞ր թիւի այս հարցը վաղուց փորձելիք դարմանել ...)

Կը թուի, թէ պատմութեան բոլոր շրջաններուն ալ մոռցած ենք կամ մոռացութեան տուած, թէ «խաղաղութիւն» բառը ի սկզբանէ գոյութիւն չէ ունեցած այդ ցեղերուն համար, եւ եթէ մեր համոզումներուն անսանք, կ'արագացնենք կամ կը դիւրացնենք անոնց նպատակները ...

Պատմութիւնը եղած է, որ դասեր քաղենք անկէ. բայց կարծես մենք ուշիմ կամ աշխատասեր աշակերտներ չենք, գոնէ պատմութեան դասերուն մէջ, դժբախտաբար:

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ
Ս. Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցին կարիքը ունի քարտուղարի (երթեւեկը ապահովուած):
Հետաքրքրուողները կրնան դիմել Ազգային Առաջնորդարանի դիւանապետին կամ հեռաձայնել հետեւեալ թիւին՝ 2122756:
Ս. Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Թաղականութիւն

WE ARE ALL ARMENIAN



Սուսի Միշոյեան-Տապալադեան

«We Are All Armenian, Voices from the Diaspora» կը կոչուի սոյն տարուան Մարտ ամսուան մէջ Թեքսաս համալսարանի հրատարակչատան կողմէ լոյս տեսած հատորը, որ բաւական լայն սպառում ունեցաւ եւ կ'ունենայ տակաւին:

224 էջերէ բաղկացած այս հատորին խմբագրութիւնը կատարած է Արամ Մրճոյեան: Ան Chicago Review of Books-ի գլխաւոր խմբագիրն է, ինչպէս նաեւ՝ Guernica գեղարուեստական գրականութեան խմբագիրը: Կողքի գոյնագոյն ձեւաւորումը, որ կատարուած է արուեստագէտներ Տալիա Կալ-Սայիտի եւ Անտոն Տեմիրճեանի կողմէ, ձայներու բազմազանութեան տպաւորութիւն կը թողու: Գիրքը Սփիւռքի մէջ հայկական ինքնութեան փնտռողի մասին է, գրուած տասնութ հայ գրիչներու կողմէ: Գիրքի լեզուն անգլերէն է, որովհետեւ գրողները կա՛մ առիթով չեն ունեցած հայերէն սորվելու, կա՛մ ժամանակը եւ կա՛մ կամքը: Ոմանք հայերէն կը խօսին, բայց կը խուսափին գրելէ, որովհետեւ բանաւոր խօսքն ու գրաւորը տարբեր բաներ են իրարմէ: Մրճոյեան ի մի բերելով Տասնութ գրիչներ, ազատ արտայայտութեան հարթակ կը տրամադրէ եւ կ'առաջարկէ տարբեր տեսակետներ ազգային պատկանելիութեան եւ ինքնութեան վերաբերեալ: *Տարիներ խլեց ինձմէ, որ հասկնամ թէ ինչու մէջս կը կրէի գերեզմանատուն, ուր յիշողութիւնները, որոնք երկար ժամանակ անլուրջ եւ կեանքէն խլուած էին, հոն մնացած էին քայքայուելու՝ անհասանելի ըլլալով Նոյնիսկ ինծի համար* (Գ. Էջ 169):

Ջիւ էր, որ խորունկ ձգտում գագացի հայութեան վերադառնալու (Քրիս Դ. Էջ 108):

... *Իսկ ես, գիտէի քիչ մը հայերէն, գիտէի նաեւ շատ մը տասնեակ հայերէն բառակապակցութիւններ եւ անկապ բառեր: Մեծ մայրս սորվեցուցած էր ինծի հայերէնով միջեւ տասը համբել, անկէ անդին, որք արտայայտութիւններ սորված եմ անընդհատ լսելով զանոնք: Կը հասկնայի մեծ մօրս հրահանգները:*



Տասնութ փորձագրութիւններու հեղինակներն են Նենսի Ազապեան, Լիանա Արամեան, Սոֆիա Արմէն, Գոհար Աւագեան, Ծօն Տեր Պողոսեան, Զինա Պոհապեան, Ռաֆֆի Պոհապեան, Աննա Կազմարեան, Մաշինկա Յակոբեան, Օլիվիա Գաթրանտեան, Նենսի Գրիգորեան, Նայիրա Քիւզմէ, Զինա Մըքրոյի, Կարինէ Մկրտիչեան, Ալին Օհանեսեան, Սքաութ Թուֆէնթեան, Զրակ Վարդանեան եւ Ռաֆֆի Վարդանեան: Անոնց պատումներուն ընդմէջէն կը նշմարենք, որ երբեմն մոռցուած կամ քնացած ջիղ մը կը գարթի իրենց ներսիդին, երբեմն իրենք գիրենք կը մեղադրեն, որովհետեւ լաւ հայ չեն սեպել ինքզինքնին, երբեմն բեռ կը համարեն հայ ըլլալը: Երբեմն հայ ըլլալը կը կապուի յուշի մը, երբեմն սնունդի, կրօնի, լոկ՝ բառի եւ կամ պարզապէս՝ մեծ մօր ձայնի արձագանգին: *Բացի մեծ հոր եւ մեծ մօրս հետ անցուցած ժամանակէս... կապ չեմ ունեցած իմ հայկական ժառանգութեանս հետ... միայն միջին տարի-*

«Դգալ մը շաքար տո՛ւր, դուռը գոցէ՛, լոյսը բաց, ա՛ռ ասի, հո՛ն եկուր, հո՛ն նստիր, հո՛ն կեցիր, քալէ՛, վագէ՛, արագ ըրէ՛, կամաց քալէ՛»: Այս բոլորը կը հասկնայի, առանց գիտնալու լեզուն: Իսկ երբ ան հօրեղբօրս «Դդու մ գլուխ» կ'ըսէր, կը հասկնայի, որ անօթ բառ մըն է, եւ երբ «անօթ քեզի» ըսէր, կը գիտնայի, որ սխալ բան մը ըրած էի եւ այդ սխալը ընդհանուր առմամբ գիտէի, որ կը վերաբերէր վարտիկիս եւ յետոյ յիշու, որոնք յաճախ պալէի տարազներուս տակէն կ'երեւէին: Ան Նոյնը կ'արտայայտուէր նաեւ անգլերէնով. «Cover your shame» (անօթը ծածկէ՛) կրկնելով:

Կը սիրէի հայ մեծ մայրս, սակայն կարելի եղածին չափ կ'ուզէի ըլլալ ամերիկացի: Երբ տասը տարեկան էի, կը փափաքէի ըլլալ ճերմակ Անլիտ Սաքսօն արտարանական եւ ունենալ պարզ եւ ուժեղ մականուն մը, որպէսզի գաղթականի ինքնութիւնս յայտնի չըներ: (Ն. Գ. Էջ 57):

Իւրաքանչիւրը իր հայութեան փորձառութիւնը ապրած է իր ձեռով, որ կրնայ բոլորովին տարբեր ըլլալ միւսէն, սակայն անոնք տեղ մը կը հանդիպին իրարու՝ հայրու ճակատագրին շուրջ: Երբեմն կ'ուզեն լռել, գուտ ամերիկացի ձեւանալ, չունենալ բարոյոյ ճեղք սպանուած ազգի, «սասպէս լաւ անուն մը դիր որ ամերիկացիները հաս-

կնան...» (Օ. Բ. Էջ 63), սակայն այդ փախուստը շատ անգամ անկարելի կ'ըլլայ, որովհետեւ անկախ ինքնութեան մէջ ինքնախաբեութիւն է, փախչիլ իրականութենէն: Փախչիլ վայր մը, որ չկայ: Բանի որ վայրը ներսդ է: Տեղէ մը անպայման դուրս պիտի գայ ինքզինք պարտադրելու, եթէ երբեւէ այդ հունտը ցանուած է մէջը:

Նմանատիպ մտքի հեղինակ է նաեւ Նայիրա Քիւզմէ: Իր փորձագրութեան մէջ կը պատմէ, թէ ինչպէս հայ ամերիկացի երիտասարդուհին ընկերուհիներով Գերմանիա կ'երթայ արձակուրդի: Գիշերային ակումբ կը մտնեն եւ հոն իրենք գիրենք ձերբագատուած կը գգան ամեն տեսակի բեռ: Անոնք պարտաւոր չեն գագար իրենց հայ ինքնութիւնը պարզելու: Ամերիկացի են եւ վերջ: Սակայն ներքին լռութիւնը ձայն կ'առնէ անսպասելի մէկ պահուն:

Թարգմանաբար կը ներկայացնենք բանի մը հատուած գրութենէն.

Երկար ժամանակ ոտքի մնալէ ետք, անօթի գագացի: Ուզեցի դուրս գալ, մեթրոյով մեր հանրակացարանը երթալու: Բայց ինքն ինքն կը փնտրէր որ գտանք բաց խանութ մը, որմէ անուշ հոտեր կու գային: Միջին արեւելեան արագ սնունդի վայր մըն էր: Պատին վրայ գունաւոր պաստառներով ճաշատեսակներու նկարներ կային: Աչքս դպաւ «Լահմաճուն»-ին: «Լահմաճուն» բառը թեւ արաբական ծագում ունի, սակայն Ամերիկայի մէջ ան «հայկական փիցցա» կը կոչուի, իսկ ահա եւրոպայի մէջ գայն «թըրքական փիցցա» կը կոչեն: Կոպերու ներդրումը վստահ ըլլալու համար թէ ճիշդ էր տեսածս, թէ ոչ: Այո՛, այդպէս էր: Ապստիջում կարգս եկաւ, սակայն ես դեռ քանակած նկարին վրայ արձանագրուած բառերուն կը նայէի՝ «Turkish Pizza»:

Եւրոպայի մէջ շատ ատելի թուրքեր կան, քան հայեր, իսկ ամերիկայի մէջ՝ հակառակը: Այս փաստ մըն է եւ բացատրութիւն, թէ ինչո՛ւ այս ճաշատեսակի անուանումները այսպէս ընդունուած էին իւրաքանչիւր շրջան: Ես որ կ'ապրիմ «Little Armenia» կոչուած թաղամասին մէջ, ամեն շաքար կ'ուտեմ հայ մօրս պատրաստած «հայկական լահմաճուն»-ը: Պերլինի մէջ ճաշարանը կանգնած, ահա, ես ամերիկացի չէի այլեւս:

Աշխատող երիտասարդը գերմաներէնով բան մը ըսաւ եւ վերջապէս նայեցայ իրեն: Մութ մագեր, մուգ աչքեր, սօրոքը խիտ եւ տրամոճ: Ձայնը բարձրացուց գայրացած՝ հարցնելու համար թէ ի՛նչ կ'ուզեմ ապսպրել, մանաւանդ որ ետեւս երկար պոչ մը գոյացած էր եւ ոչ ոք վստահաբար կը գիտակցէր, թէ ես ի՛նչ կը գագայի այդ պահուն: Կոկորոս մաքրեցի, բայց ձայնս կըրտուած էր: Ձեռքս բարձրացուցի եւ ցոյց տուի լահմաճունին նկարը: Պաշտօնեան նորէն բաներ մը ըսաւ. շարունակեցի մատով ցոյց տալ: Յօնքերը վեր առաւ եւ գերմաներէնով բաներ մը կրկնեց: Թուքս կու տուի եւ նկարին թուր արտասանեցի անգլերէնով: Գրեթէ ամեն ոք, որուն հանդիպած էիք հոս,

անգլերէն կրնար խօսիլ: Վստահաբար թիւերը պիտի հասկնար: Թիւը կրկնեցի: Ժպտեցաւ եւ թաւ ձայնով հարցուց. «Թըքական փիցցա»: Կրկնեցի թիւը անգլերէնով: Ան հարցունը անգամ մըն ալ հարցուց: Միրտս լեցուած էր, քիչ մնացեր էր փոքրէր: Չգացի ետեւի խճողումս եւ թուրքին հայեացքը՝ աչքերուս մէջ: Թիւը կրկնեցի անգլերէնով: Ժպտեցաւ եւ կրկնեց. «Թըքական փիցցա»: Այս անգամ հարցում չէր: Տեսակ մը նուաստացում գագացի եւ գայրոյթով համակուեցայ: Գլուխս շարժեցի. «Լահմաճուն» ըսի աչքերուն մէջ նայելով. «Այդ է անունը, ատկէ կ'ուզեմ»: Պահանջուած եւրոներս երկարեցի:

Վստահ չեմ, թէ ինք գիտաւ հասկցաւ: Վստահ չեմ նաեւ, թէ «լահմաճուն» բառը իր խաղաղութեան առաջարկ ընդունեց, թէ ոչ: Նոյն բառը կ'օգտագործենք նոյն ճաշին ակնարկելով: Բառ, որ ո՛չ հոյ, ո՛չ իր լեզուով կ'արտասանուի:

Գայով ինծի, «լահմաճուն» ըսելով նպատակս իրեն խաղաղութեան առաջարկ ներկայացնելը չէր երբեք, պարզապէս կ'ուզէի յայտնել, որ ես «Turkish Pizza» արտասանող չեմ, ճիշդ այնպէս ինչպէս ի՛նք երբեք պիտի չարտասանէր «Չայոց Տեղասպանութիւն» բառը:

Բարեկամի մը հետ երբ ինքնութեան հարցին շուրջ կը գրուցէի՝ ան ըսաւ. «Օտարներու մէջ է, որ ինքզինքը կը գգաս»: Ծշմարտութիւն կայ այդ խօսքին մէջ: Լեզուներն ալ այդպէս են: Լեզուներու բախման մէջ է, որ կը նշմարենք նրբութիւնները մեր լեզուին: Ու լեզուները կը բախին իրարու ու կը ստիպեն, որ մտնես միւս լեզուին մէջ, իր նրբութիւնները յարգես, որ երբեմն լարուածութիւն կը պատճառէ, մանաւանդ ուր սորվողին համար: Ինք, որ միւսին կողմէն է եւ ուղեղը անով կը բանի: Իրեն համար այլ խօսիլը ընդամենը փոխադրում մըն է մէկ լեզուէն միւսը: Աշակերտուիք Ստեֆանին, օրինակ, կը ձգտի հայերէն սորվելու, որովհետեւ կը գիտակցի որ հայ ըլլալու կարեւոր կողմանն է լեզուն եւ սակայն կ'ապրի վայրի մը մէջ, ուր չկայ միջապայրը հայախօսութեան: Այս մասին ան իր կարծիքը կը յայտնէ ըսելով. «Ինչպէ՞ս պէտք է կառավարել տարբեր լեզուները, որ հաւասար ըլլան, որ մէկը միւսը չլափէ: Պէտք է ամեն օր կրկնել մանդայի պէս, միջեւ որ իւրաքանչիւր լեզու իր սահմանը գտնէ: Մարդ միշտ դիւրինին կը վագէ, որ հանգիստ կարենայ գրուցել: Բայց հիմա մտնողքս անհասկնալի է. ինչպէ՞ս նախադասութիւն պիտի կազմեմ, երբ տակաւին լեզուին սկիզբն եմ: Երբ լեզու, քերականութիւն եւ օրէնք պէտք եղածին չափ չեմ գիտեր...: Մտնողքս դեռ չեմ կրնար արտայայտել հայերէնով հարիւր տոկոս: Այս օր չեմ կրնար խօսիլ առանց ընդհատումի, առանց դադարի, առանց ուրիշ լեզուներէ փոխ առնելու: Ամեն լեզու իր լեզուամտածողութիւնը ունի: Կ'ուզեմ մտնել այդ լեզուամտածողութեան մէջ ամբողջովին (Ս. Բ.):

Վերջապէս ի՛նչ է հայ ըլլալը. յիշողութի՞ն, պարտադրա՞նք, բե՞ռ, **Շար. էջ 6**

ՍՈՒՐԻՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ԱԽՐՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ՝ ՊԱՔԱՆՈՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆԵՆԵՐԸ

Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը Երկուշաբթի, 17 Յուլիս 2023-ի առաւօտեան հրապարակեց 2022-2023 ուսումնական տարեշրջանի երկրորդականի աւարտական կարգի՝ պաքալորիայի, պետական ըննութիւններուն արդիւնքները:

Նախարարութեան համաձայն, գիտական բաժինէն Սուրիոյ բոլոր նահանգներէն ըննութեան ներկայացած է 147.243 աշակերտ-աշակերտուհի, յաջողած՝ 97.667 աշակերտ-աշակերտուհի, հետեւաբար գիտական բաժինի յաջողութեան տոկոսը եղած է 66,33 առ հարիւր: Նախորդ տարուան 2021-2022 տարեշրջանի գիտական բաժինի յաջողութեան տոկոսն էր 55,29%:

Գրական բաժինէն ըննութեան ներկայացած է 68.676 աշակերտ-աշակերտուհի, յաջողած՝ 47.169 աշակերտ-աշակերտուհի, 68,68 առ հարիւր յաջողութեան տոկոսով: 2021-2022 տարեշրջանի գրական բաժինի յաջողութեան տոկոսն էր 54%:

ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ԱԶԳ. ՃԵՄԱՐԱՆ

Գիտական Բաժին	Դալար Գոյլումեան	2324	
Մասնակցողներու թիւ՝ 44	Սերլի Զամբարձումեան	2263	
Ցաջողածներու թիւ՝ 40	Սիլվի ժամկոչեան	2252	
Ցաջողութեան տոկոս՝ 91%	Անդրանիկ Նաճարեան	2246	
	Սերժ Սիմոնեան	2200	
Աննա Սաղպագարեան	2814	Սերլի Տէկիրմենեան	2189
Արեգ Արոյեան	2797	Մարիա Սարգիսեան	2142
Ներսէս Գասապեան	2764	Յուրի Տէլիկտերեան	2137
Յովիկ Իսիճեան	2733	Արագ Շառոյեան	2080
Յարութ Տէմիրճեան	2682	Արագ Ապուլպալուտեան	2061
Սերլի Պետրոսեան	2634	Լուսին Զալլաճեան	2006
Ասատուր Ասատուրեան	2628	Ֆլորա Զէյթլեան	1827
Եղիա Մարանեան	2605	Գեորգ Կիլիւմեան	1827
Սեւակ Սիմոնեան	2603	Արշակ Սիմոնեան	1802
Յակոբ Զիրքճեան	2555	Մեղրի ճուլիայեան	1785
Ճորճ Տերվիշեան	2530		
Ռոպերտ Զաքարեան	2522	Գրական Բաժին	
Ճորճ Փաթանեան	2500	Մասնակցողներու թիւ՝ 9	
Արեւիկ Օգճեան	2495	Ցաջողածներու թիւ՝ 9	
Յովհաննէս Զուլճեան	2458	Ցաջողութեան տոկոս՝ 100%	
Թալիա Եագուպեան	2432		
Մարի ժողէ Զարշաֆճեան	2419	Թալին Պէպեճեան	2236
Ժանի Ամպարճեան	2419	Անահիտ Միսեան	2207
Գրիգոր Փայասեան	2416	Ճորճ Ալաճաճեան	2115
Գրիգոր Արուշեան	2412	Դրո Սանոսեան	2099
Պայծառիկ Դանիէլեան	2391	Մուշեղ Աբրահամեան	2008
Յովհաննէս Տէր Պօղոսեան	2363	Ճորճ Եագուպեան	1990
Ռիթա Մալխասեան	2349	Մարիա Թաշճեան	1882
Սահակ Սահակեան	2336	Խաչիկ Սոլաքեան	1670
Սարգիս Կիրակոսեան	2324	Արշալոյս Խաչէր	1502

ԿՐԹԱՍԻՐԱՅ Ս. ՉԵՄՊԵՐՃԵԱՆ ԵՐԿՐԻ ՎԱՐՃԱՐԱՆ

Գիտական Բաժին	Սեւակ Ատուրեան	1978	
Մասնակցողներու թիւ՝ 36	Շաֆիք Մաթար	1912	
Ցաջողածներու թիւ՝ 27	Ֆետի Մախլուֆ	1894	
Ցաջողութեան տոկոս՝ 75%	Դիւսա Տոսո	1781	
	Մեղրի Տոսիկեան	1589	
Մարիա Զապպապէ	2802	Գրական Բաժին	
Ֆարահ Չախուր	2788	Մասնակցողներու թիւ՝ 16	
Բալին Իսկէնեան	2775	Ցաջողածներու թիւ՝ 16	
Փաուլօ Ճապուր	2736	Ցաջողութեան տոկոս՝ 100%	
Փոլա Վարդան	2716		
ժողէՖ Շաուա	2622	Լիլա Զերոբեան	2198
Արթին Ճաուլագ	2611	Իլիանա Տահաք Ալուարտ	2165
Մարինէր Արքիօ	2588	Լամիթա Զաուարա	2162
ժան Տապապաղեան	2564	Նատին Ղազի	2148
ժուլէ Մասրիէ	2551	Աննա Պասմաճի	2057
Անդրանիկ Գոգաքճեան	2538	Մաթիա Պախիսաշ	2012
ժագլին Տմիան	2482	Եուսէֆ ալ-Սալլում	1947
Նագելի Իսուրք	2478	Սարին Զարիթօ	1904
Գետակ Սարգիս	2434	Մեղրի Կիւզլեան	1884
Մէլի Սաղիր	2424	Փամելա Զամուի	1840
Վիոլա Մրէշ	2391	Արգիսա Այնթապլի	1830
Սիլվի Զաճիկարապետեան	2344	Սոնա Պերճիքլեան	1764
Սարգիս Արոյեան	2331	Ռիթա Անժելա Պէքաճեան	1752
Զուլին Կարապուշեան	2324	Մայտա Շուշունեան	1735
Զրիստին Թալպա	2095	Միրիամ Պարմաքսըզ	1563
Սանտրա Թաշճի	2080	Մարք Աֆիսա	1556
Բալին Թաթուլ	2053		

ԼՆԱՃԱՐԵԱՆ-Գ.ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Գիտական Բաժին	Մէլի Սինասեան	2561	
Մասնակցողներու թիւ՝ 30	Գարէլ Պարսումեան	2557	
Ցաջողածներու թիւ՝ 24	Գասպար Արսլանեան	2511	
Ցաջողութեան տոկոս՝ 80%	Ճորճի Պարտիզպանեան	2430	
	Ճորճ Ղազարեան	2364	
Ալպեր ժագ Պօղոսեան	2862	Ալին Փոլատեան	2321
Յարութ Գարճեան	2846	Անի Իսկէնեան	2292
Խաչիկ Գոչեան	2829	Վարդի Պետրոսեան	2285
Ճորճ Գալայճեան	2822	Ալինա Գաթիպեան	2207
Մեղրի Զալէպի	2727	Ճորճ Պալճեան	2195
Ճորճ Սիուֆի	2716	Լիլիթ Նազարեան	2180
Սիմէլ Ալ Ահմար	2703	Փաթիլ Կիրակոսեան	2154
Յարութ Ուրիշիկեան	2683	Նանոր Իսահակ	1976
Ճորճի Գարագաշեան	2656	Մարիո Գասապեան	1870
Գեորգ Տէր Եղիայեան	2617		

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Գիտական Բաժին	Նատիա Թումա	2655	
Մասնակցողներու թիւ՝ 15	Չոհրապ Միւրեքեան	2605	
Ցաջողածներու թիւ՝ 15	Մարիա Զաճար	2569	
Ցաջողութեան տոկոս՝ 100%	Աւօ Գագանճի	2496	
	ժէսիքա Խաուամ	2464	
Լուսն Չիքրա	2845	Սելինա Թալաթիսեան	2376
Մարի Պէլ Թոքաթլի	2794	Աթինա Պազճի	2340
Շաֆիք Գարմօ	2787	Նայա Ահմար	2309
Նայա Շուրէյքի	2765	Նագար Զիւքլեան	2279
Նայա Ապտ Ուլմասիի	2660	Կարէն Գասպայեան	2194

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Մուսալի ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին, Բերիոյ Զայոց Թեմի Ազգային Իշխանութեան եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՀԱՅԿՈՒՅԻ ՍՈՒՍԱԼԼԻԻ (Ծնեալ՝ ԺԱՄԿՈՇԵԱՆ)

մահուան սուգին: Զանգուցեալի բառասուկի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Յուլիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Զառամիկ Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Զալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Ն. Աղբալեան» սրահը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ԱՆՆԱ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԻ



Զանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Յուլիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Զալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Կրթասիրաց Մշակութային Միութեան շրջափակը:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- Խոյ**
Անկեղծ ու հաւատարիմ մարդոց մոլ շրջապատուած էք: Արժեւորեցէ՛ք ձեր սիրելիներուն հետ անցուցած իւրաքանչիւր վայրկեանը:
- Ցուլ**
Չափազանց մտահոգ եւ անկայուն վիճակ մը ունիք: Կարճ ճամբորդութիւն մը կրնայ կազդուրել ձեզ:
- Երկուորեակ**
Պարտաճանաչ էք ու բոլորին սիրելի: Հեռաւոր երկրէ մը հաճելի անակնկալ մը պիտի ունենաք:
- Խեցգետին**
Բազմատեսակ ձիւղերով օժտուած էք: Կեանքի դժուար պայմանները պիտի յաղթահարեք: Ուժով եղէ՛ք:
- Առիւծ**
Մանր-մունր հարցերով յաճախ տակնուվրայ կ'ըլլաք եւ անորոշ վիճակի կը մատնուիք: Վրեժխնդութենէ գերծ մնացէ՛ք:
- Կոյս**
Քնքուշ ու անուշ էք: Մարդոց հիացումին եւ գնահատանքին արժանի: Հպարտացէ՛ք:
- Կշիռք**
Հիւանդութենէ գերծ մնալու համար ձեր առողջութեան հոգ տարէ՛ք: Յաջողութիւն մը ձեր դուռը պիտի թակէ այս շաբաթ:
- Կարիճ**
Փոքր դժուարութիւնները պիտի փարատին եւ դուք պայծառ արեւուն նման պիտի լուսաւորուիք: Մի՛ մտահոգուիք:
- Աղեղնաւոր**
Բարեկամներու աջակցութիւնը պիտի վայելէք եւ դուք ձեզ ապահով գգաք: Երախտապարտ եղէ՛ք անոնց:
- Այծեղջիւր**
Այս շաբաթ ձեր գործընկերներուն հետ հաճելի պտոյտ մը պիտի ունենաք: Բնութիւնը կազդուրիչ է: Ուրախացէ՛ք:
- Ջրիռ**
Կեանքը լաւատեսութեամբ ապրեցէ՛ք: Ձեր առօրեայ գործերը անյապաղօրէն կատարեցէ՛ք, որպէսզի չծանրաբեռնուիք: Միշտ ժղպտացէ՛ք:
- Չուկ**
Չափազանց անտարբեր դարձած էք մարդոց հանդէպ: Ապերախտ մի՛ ըլլաք: Ընթրիքի հրաւեր մը տալով ուրախացուցէ՛ք ձեր ընկերները:

ԽՄՃԱՆԿԱՐ

ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ԵՒ ԻՆՉ ԿԱՐԳԻԼՈՒԻ ԸՆԵԼ ԱՐԵՒԱՅԻՆ ԱՅՐՈՒԱԾՔՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Արդէն ամառնային արձակուրդը սկսած ենք վայելել: Ծամբորդութիւններու ծրագիրներ կը մշակենք, յատկապէս ծովագնացութիւն եւ



բացօղեայ, անտառային պտոյտներ կը կազմակերպենք:


Արդարեւ, ճամբորդութիւններու մեկնելէ առաջ խիստ կարեւոր է իմանալ արեւային այրուածքներէն արդիւնաւետ ձեւով պաշտպանուելու ձեւերը եւ այրուածքներու պարագային առաջին բուժօգնութեան կանոնները:

Արեւային այրուածքը մաշկին վնասուիլն է անդամակիշակագոյն ճառագայթներու ուղղակի ազդեցութեան հետեւանքով:

Արեւային այրուածքի նշաններն են:
-Մաշկի կարմրութիւն
-Կարմիր բշտիկներու յայտնաբերում

Ինչպէ՛ս գերծ մնալ արեւային այրուածքներէն

1. Խուսափի՛ր արեւուն ուղիղ ճառագայթներէն առաւօտեան 10:00-էն յետմիջօրէի 16:00-ի մէջ գըտ-



նուող ժամանակահատուածին: Յատկապէս այս շրջանին արեւուն ճառագայթները վտանգաւոր են:

- Տաք օդին կրել լայնեզր գլխարկ եւ չմոռնալ արեւապաշտպան ակնոցները:
- Հետազօտութիւնները պարզած են, որ տաք օրերուն նախապատուութիւնը պէտք է տալ մուգ կապոյտ հագուստին, որովհետեւ այդ գոյնն է, որ առաւելագոյն կը պաշտպանէ մաշկը արեւուն ճառագայթներուն վնասակար ազդեցութենէն:
- Այրուածքներու եւ մաշկի քաղցկեղի կանխարգելման կը նպաստեն SPF եւ PPD նշումներով արեւապաշտպան քունկները՝ պաշտպանութեան գործօնի 30 կամ 50 աստիճանով:

Ի՛նչ ընել արեւային այրուածքներ ունենալու պարագային

Խուսափեցէ՛ք այրուածքի մակերեսին սառնոյց տեղադրելէ:
Այրուածքին բուսափղ եւ սեր մի՛ քսէք:
Այրուածքի մակերեսին խոնաւ եւ բարակ հականեխում կտոր դրէ՛ք:
Օգտագործեցէ՛ք այրուածքի յատուկ հակա-



բորբոքային դեղեր, որոնք կը նուազեցնեն կարմրութեան աստիճանը:

Անհրաժեշտութեան պարագային դիմեցէ՛ք բժիշկին:
Բարի արձակուրդ կը մաղթենք ձեզի:

Ինչպէ՛ս Դիմանալ Ամրան Տաք Ջերմաստիճանին


Ամրան տաք եղանակը կրնայ յանգեցնել նաեւ մարմնի ջրազրկումին եւ արեւահարութեան: Ջրազրկումի կրնան ենթակայ ըլլալ բոլոր տարիքի մարդիկ, յատկապէս՝ մանուկներն ու տարեցները:

Հարկ է դիմել հետեւեալ նախագոյն շաքարեղէնի ընթացքին շատ ջուր խմելու: Ջուրին կրնաք ակեցնել կիտրոնի շերտ մը, թարմ անանուխի տերեւներ... Հրաժարեցէ՛ք քաղցր եւ շատ պաղ կազային ըմպելիքներէն:

2- Ամրան եղանակին կրեցէք բաց գոյնով, թեթեւ հագուստներ: Հրաժարեցէ՛ք կաշու կտորներէն եւ նախապատուութիւնը տուէ՛ք բամպակեայ, լայն տարբերակներուն:

3-Պաշտպանուեցէ՛ք արեւուն ուղիղ ճառագայթներէն: Ձանացէ՛ք կէսօրուան ժամերուն դուրս չելլել, իսկ եթէ այլ տարբերակ չունիք, գըլխարկ ու ակնոց կրեցէ՛ք եւ արեւապաշտպան քունկներ օգտագործածեցէ՛ք:

4-Խուսափեցէ՛ք միզամուղներէն: Միզամուղ դեղերն ու մթերքները կը նպաստեն մարմնի հեղուկի կորուստին: Չափաւոր ձեւով օգտագործեցէ՛ք սուրճը, կազային ըմպելիքները եւ այլն...



5- Առատօրէն կերէ՛ք պտուղի եւ բանջարեղէնի տեսակակի: Ձմերուկը, վարունգը, լոլիկը, հազարը, խաղողի հիւթը միջբոտարբեր պարունակող մթերքներ են: Հետեւաբար առատօրէն սպառեցէ՛ք զանոնք, իսկ կծու, խլրոտ եւ առատօրէն համեմուած ուտեստները չափաւորեցէ՛ք:

6- Հրաժարեցէ՛ք երկար եւ ծանր մարզումներէն, որոնք քրտնարտադրութիւն կը մարտնչեն, ինչ որ իր կարգին ջրազրկումի պատճառ է: Ձեզի հետ շիշով ջուր ունեցէ՛ք, որպէսզի մարզումէն առաջ, ընթացքին եւ յետոյ քիչ քիչ խմէք:

Մարզական



Ռաֆֆի Սիկսիան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՍՕ ՈՒՆԱՆԵԱՆԸ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՆՈՒԻՐԱԾ Է ԵՐՁԱՓՈՎԱԿԱՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՐ ԱՐՑԱԽՑԻՆԵՐՈՒՆ

Հայաստանի Քարաթեի Միությունը կը յայտնէ, որ Խրիզիստանի մէջ 15 Յուլիսին տեղի ունեցաւ EFC Global 33 MMA մարզածելի խոշոր միջազգային մրցաշարքը, ուր նախատեսուած էր, որ հայ մարզիկ Կամօ Ունանեանը մենամարտեր պրագիլացի անուանի մարզիկ Ռոտրիկէս Ռոնտինելլիի հետ: Մենամարտէն մէկ օր առաջ պրագիլցի մարզիկը անյայտ պատճառներով հրաժարած է մենամարտի մասնակցիլ Կամօ Ունանեանի հետ: Վերջին պահուն կազմակերպիչները Ունանեանի համար գտած են նոր մրցող մը:



Այսպիսով, EFC Global 33 MMA մարզածելի խոշոր միջազգային մրցաշարքին Կամօ Ունանեան մրցած է Խրիզիստանի MMA-ի ախոյեան 19-ամեայ Տեմիրլան Եմիրլանովի հետ: Մենամարտը տեւած է ընդամենը 40 վայրկեան, քանի որ Ունանեան նաքաւնտի ենթարկած է Եմիրլանովը:

Մենամարտէն ետք, Կամօ Ունանեան յայտարարած է, որ այս յաղթանակը կը նուիրէ 200 օրէն աւելի Արցախի մէջ Ատրպեյճանի կողմէ շրջափակման մէջ գտնուող արցախցիներուն:

Յիշեցնենք, որ MMA մարզածելին մէջ այս Կամօ Ունանեանի 3-րդ յաղթանակն է: Ան MMA մարզածելով սկսած է զբաղիլ 2023-ին եւ արդէն արձանագրած է 3 յաղթանակ ու ոչ մէկ պարտութիւն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՔՐԻՍՏԻԱՆՕ ՌՈՆԱՆՏՕՆ ԿԸ ԳԼԽԱՎՈՐԷ ԱԵՒ ԱՐԴՅԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐՁԱՏՐՈՒՐ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ՑՈՒՑԱԿԸ



Ռեքորտներու պաշտօնական կայքը կը հաղորդէ, որ 2017 -էն ի վեր առաջին անգամ (եւ ընդհանուր առմամբ 3-րդ անգամ) ըլլալով Փորթուկալի ֆութպոլի հաւաքականի եւ արաբական «Ալ-Նասր» ակումբի աւագ Քրիստիանօ Ռոնալտօն գլխաւորած է Forbes-ի՝ աշխարհի ամենաբարձր վարձատրուող մարզիկներուն ցուցակը՝ արժանանալով Գինեսի ռեքորտներու տիտղոսին՝ որպէս 2023 -ին տարեկան ամենաբարձր հասոյթը ապահովող մարզիկ:

ԻՆՔՐԸՐ-Ը ՎԵՐՍԿԱԾ Է ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ

Իտալական Միլան քաղաքի Ինքըր ակումբը մեկամսեայ դադարէն ետք վերսկսած է մարզումները:

Այս մասին կը յայտնէ ակումբի մամլոյ ծառայութիւնը:

Ինքըրի հիմնական կազմի ֆութպոլիստները իրականացուցած են իրենց առաջին մարզումը, որուն մասնակցած է նաեւ Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականի նախկին աւագ Հենրիկ Մխիթարեանը:



Ֆութպոլի Իտալիոյ 2023/24 մրցաշրջանը կը սկսի 19 Օգոստոսին: Ինքըր մրցաշարքի առաջին խաղին կը մրցի Մոնցայի հետ: Խաղը տեղի կ'ունենայ 19 Օգոստոսին եւ կը սկսի Երեւանի ժամանակով 22:45-ին:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 447)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2					■	■	■	■				■
3		■									■	
4					■				■			
5							■			■		
6	■				■			■				
7			■						■			
8							■				■	
9		■										
10					■			■				
11			■									
12		■								■		■

Հորիզոնական

- 1- Պետրոս Դուրեանի բանաստեղծութիւններէն: Մագերու երկայն հիւսք:
 - 2- Միեր Մկրտիչեանի 2016-ին նկարահանած ֆիլմը, որ նուիրուած է Արցախի հերոսներուն եւ Անկախութեան 25-ամեակին: «Կեանք Ու»:
- Ողբալ:
- 3- Բոլորակը հաւասար կիսող ուղիղ գիծ:
 - 4- Ձայնաւոր տառեր: Արական անուն: Հակառակ՝ գրական ստեղծագործութիւն:
 - 5- Ս. Պատարագի բաժակ: Ռամկօրէն՝ այո:
 - 6- Երկբարբառ: Եւ: Ձգես:
 - 7- Հակառակ՝ բուռ: Պէրիլ: Հաստատական պատասխան:
 - 8- Սիւսմանթոյի ծննդավայրը: Հակառակ՝ կողմ:
 - 9- Կրկին: Մանրուած քար:
 - 10- Դաշտ: Սուրիական լրատու գործակալութիւն:
 - 11- Ցաւի ճիչ: Եական բայ: Ոչխարները հաւաքելու տեղ:
 - 12- Աննշան:

Ուղղահայեաց

- 1- Շատ ուտելով ուռիլ: Առատ, ճոխ:
- 2- Նմանաձայն տառեր: Աղբիւր:
- 3- Մոցարտի օփերաններէն. «..... Ողորմածութիւնը»: Աղեղի արձակած սլաք:
- 4- Սաստիկ հովով փոթորիկ: Լեզուով մը՝ այո:
- 5- Հակառակ՝ երկբարբառ: Զղանցք:
- 6- Մահուան լուրը հաղորդող գրութիւն: Հակառակ՝ յարաբերական դերանուն:
- 7- Տարածքի միաւոր: Լեցուն: Հակառակ՝ ցաւի ճիչ:
- 8- Իշխանական այթոռ: Մանչ: Իրերայաջորդ տառեր:
- 9- Լեցուն: Եւ: Հայրապետական գաւազան:
- 10- Երդիք: Ձիրք, տաղանդ:
- 11- Եւ: Հակառակ՝ 305: Ս. Գրիգոր Լուսաւորիչի հայրը:
- 12- Ուրախ կեանքով:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 446)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	ւ	ր	ն	ա	ւ	ա	տ	ե	ա	ց	
2	ա	ե	ի	ր	լ	ն	ա	ւ	ա			
3	ր	է	ա	ւ	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
4	ա	կ	լ	ա	ա	ա	ա	ա	ա	ա	ա	ա
5	ա	յ	ն	ն	կ	ա	ն	կ				
6	ւ	ն	ի	ւ	ա	ա	կ	ե	ա	ն		
7	ա	ն	ի			ա	ա	ա	ա	ժ		
8	ն	ա	ր	դ	ն	ա		յ	ա	ն		
9	ր		ա	ա			է	ձ	ս	յ		
10	ա	ւ	ր	ն	յ	ր		ր	գ			
11	մ	ա	ռ	ա	ն	ի	ն	ի	ա			
12	ա	կ	ն	ի	ս	ն	ն	ւ	ն	կ		

ԼՈՒՄԻՆ

ԵՐԱՌԵՐԹԻ

24/7



25° 42°

ԵՐԵՐԵՐԹԻ

25/7



24° 39°

ՉՈՐԵՐԵՐԹԻ

26/7



24° 39°

ՀԻՆԱԵՐԹԻ

27/7



25° 40°

ՈՒՐԵՐԹ

28/7



25° 40°

ՇԱՐԱԹ

29/7



27° 43°

ԿԻՐԱԿԻ

30/7



24° 43°

ՔԱՐԵՆ ԵՓՓԷ... Սկիզբ՝ էջ 1

կայս լուրջությամբ յարգեցին նահատակներուն յիշատակը:

Շրջանաւարտ հունձքը ներկայացնող երգչախումբը հանդեսին բացումը կատարեց Սուրիոյ եւ Յայաստանի գոյգ քայլերգներով:

Հայերէն բացման խօսքով հանդես եկաւ Արեգ Արոյեան, որ անդրադարձաւ ճեմարանէն ներս վեց տարիներու ուսումնական եւ ընկերային կեանքին, իսկ արաբերէն խօսքով Արեւիկ Օգճեան ներկայացուց գիտութեան կարեւորութիւնը մարդու կեանքին մէջ:

Եւ այսպէս երգչախումբը յա-

Յայերէն ուղերձը ընթերցեց Աննա Սաղպազարեան, որ ըսաւ. «Միջին Արեւելքի տարածքին գործող հայկական վարժարաններու մէջ իւրայատուկ տեղ ու դեր ունեցող Ազգային Զարէն Եփեփէ ճեմարանը ստանձնած է մարդու ժի պատրաստութեան ամենակարեւոր բնագաւառը: Եթէ շրջինը աշխարհով մէկ, պիտի գ մայլինը ծանօթանալով գիտական, գրական, արհեստագիտական համարեա՛ թողոր մարգերուն մէջ պատուաբեր նուաճումներ արձանագրած ճեմարանաւարտ հայորդիներով, պիտի հպարտանանք ճեմարանով եւ հոգեկան գոհունակութիւն զգանք ճեմարանաւարտ ըլլալու համար»:

նուիին եւ Շրջ. Միութեան ատենապետ Ներսէ Պարսումեանի ձեռամբ նախ պարգեւատրուեցան 2021-2022 ուսումնական տարեշրջանի 12-րդ կարգի պետական քննութեան առաջնակարգ երեք հետեւեալ շրջանաւարտները՝ Զարէն Գատեհճեան (առաջին), Սարին Շահինեան (երկրորդ), Կալին Պալապանեան (երրորդ):

Այս երեքը պարգեւներ ստացան նաեւ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան կողմէ:

10-րդ կարգէն պարգեւատրուեցան Նանոր Լախոյեան (առաջին), Շողակ Խրոյեան (երկրորդ), Արփի Արապանեան (երրորդ):

11-րդ գիտական բաժինէն պար-

երբ բեմ բարձրացան 2022-2023 տարեշրջանի 53 շրջանաւարտներ՝ Առաջնորդ Սրբազան Զօր ձեռամբ երկրորդականի իրենց վկայականը ստանալու համար:

Միեւնոյն ատեն հայերէն լեզուի առաջնակարգ ուսանողները տնօրէնութեան կողմէ գովասանագրերու արժանացան, իսկ հետեւեալ աշակերտները ստացան Կիլիկիա իրատարակչատան կողմէ նուիրուած «Մկրտիչ Մկրտիչեան» մրցանակը՝ Աննա Սաղպազարեան, Սերլի Պետրոսեան եւ Յակոբ Զիւրքճեան:

Օրուան եզրափակիչ պատգամը ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան ու ըսաւ. «Կողար էր



ջորդաբար ներկայացուց փունջ մը հայերէն եւ արաբերէն երգեր, գեղարուեստական դէկավարութեամբ ճեմարանի երաժշտութ. ուսուցչուհի Բուզան Պարսումեանի:

Շրջանաւարտ հունձքը կոչուեցաւ «Ս.Ներսէ Շնորհալի» սերունդ, հայոց հայրապետին մահուան 850-ամեակին առիթով:

Երգչախումբին յաջորդեց Ս.Ներսէ Շնորհալի կենսագրութեան ներկայացումը, ապա շրջանաւարտները հանդես եկան խմբային հայերէն եւ արաբերէն ասմունքներով եւ Ներսէ Շնորհալիին հանելուկներով:

Խումբ մը շրջանաւարտներ ջութակով, քանոնով, դաշնամուրով եւ կիթառով ներկայացուցին ազգային եւ հայրենասիրական երգեր:

Արաբերէն ուղերձը ընթերցեց Սերլի Պետրոսեան: Ան 12-րդ կարգի աշակերտութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Ազգ. Զարէն Եփեփէ ճեմարանի ուսուցչական կազմին, ծնողներուն եւ ազգայիններուն՝ իրենց ցուցաբերած հոգատարութեան ու խնամքին համար:

Ազգ. Զարէն Եփեփէ ճեմարանի տնօրէնուհի Չեփիւռ Է. Բիսեան ըսաւ որ այս տարին անցուցինք բաւական դժուար պայմաններու մէջ, բոլորս ցնցուեցանք աղետալի երկրաշարժին պատճառով: Ապա յիշեց տնտեսական եւ ծառայողական ծանր պայմաններ յաղթահարած վարժարանիս տարեկան ընթացքը: Բիսեան ընթերցեց ճեմարանի 2022-2023 ուսումնական տարուան տեղեկագիրն ու աշակերտներուն ձեռքբերումները ներկայացուց:

ճեմարանի պետական տնօրէն Ապտուլ Համիտ ալ-Մասրի ներկայացուց երկրի դժուար պայմաններուն մէջ կրթական կեանքի կայուն ընթացքը: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց սուրիական բանակին եւ Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասադին, որոնց շնորհիւ խաղաղութեան մէջ կ'ապրինք ու կարելիութիւն կ'ունենանք բնականոն ուսումնական կեանք յառաջ տանելու:

Ամեն տարի ճեմարանի Շրջ. Միութիւնը կը պարգեւատրէ երկրորդականի երեք կարգերու առաջնակարգ աշակերտները: Տնօրէ-

ցեւատրուեցան Արէն Խրոյեան (առաջին), Աննա Պետրոսեան (երկրորդ), Յովիկ Տատաղեան (երրորդ), իսկ 11-րդ գրական բաժինէն պարգեւատրուեցան Մարին Պալապանեան (առաջին), Սերլի Ճենսեան (երկրորդ), Ծիլա Գանձապետեան (երրորդ):

Գրական բաժինէն՝ Պօղոս Կարապետեան (առաջին), Բալիկ Խրոյեան (երկրորդ), Էլիզապէթ Խաչատուրեան (երրորդ):

ճեմարանի 1977-ի շրջանաւարտներուն կողմէ պարգեւատրուեցան նաեւ 10-րդ, 11-րդ եւ 12-րդ կարգերու հայերէն լեզուի բարձրագոյն սիշեր ապահոված աշակերտները:

10-րդ կարգէն Արփի Արապանեան, Եսթեր Կիլտալեան, Նանոր Լախոյեան:

11-րդ կարգէն Արէն Խրոյեան, Աննա Պետրոսեան, Յովիկ Տատաղեան:

12-րդ կարգէն Աննա Սաղպազարեան, Արեգ Արոյեան եւ Յակոբ Զիւրքճեան:

Հասաւ ամենէն հաճելի պահը,

ձեր սերունդը յորջորջել մեր ազգի եւ եկեղեցւոյ պատմութեան մէջ իր անջնջելի կնիքը թողած մեծ հայրապետին՝ Ս. Ներսէ Շնորհալիի անունով: Շնորհալիին ունեցած է ազգին եւ հայրենիքին, ազգային եւ եկեղեցական արժեքներուն նկատմամբ խոր գիտակցութիւն: Ուստի ձեր ուսերուն մեծ պարտաւորութիւն դրուեցաւ նման պտղաբեր կեանք ունեցող, ամեն մակարդակի վրայ բերուն գործունէութիւն ծաւալած Շնորհալիի արժանաւոր գաւակները դառնալու: Դուք պիտի արժեւորէք այդ խոստումը ապագային ձեր տալիքներով՝ մեր եկեղեցւոյ, ազգին, հայրենիքին ու ժողովուրդին»:

Հանդեսը փակուեցաւ ճեմարանի քայլերգով, կատարողութեամբ երգչախումբին, ապա սրբազան հօր «Պահպանիչ» աղօթքով:

Շրջանաւարտները յուզումնախառն ապրումներով բոլորեցին փուլ մը ու նոր փուլ մը բացուեցաւ իրենց դիմաց դէպի բարձրագոյն ուսում:

**Շրջանաւարտ
Աննա Սաղպազարեան**